ISSN 1829-0469

# ԵՐԱԺԻՇՏ

ԵՐԵՎԱՆԻ ԿՈՄԻՏԱՍԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՆՍԵՐՎԱՏՈՐԻԱՅԻ ԱՄՍԱԹԵՐԹ

Լույս է տեսնում 2005թ. դեկտեմբերից | # 10 (154) հոկտեմբեր 2018 | գինը` 100 դրամ

## ՇՆՈՐՀԱՎՈՐՈՒՄ ԵՆՔ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 5-Ը ՈՒՍՈՒՑՉԻ ՕՐԸ

## ՀԱՅԱՍՏԱՆ-ԻՏԱԼԻԱ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ



*Շահեն Շահինյան, Մարկո Սոմադոսի,*
*Երևանի Կոմիտասի անվ. պետական կոնսերվատորիայի և Ումբերտո Ջորդանոյի անվ. պետական կոնսերվատորիայի ուսանողներից կազմված նվագախումբ,*
*դիրիժոր Մարկո Սոմադոսի*

3

## ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅՈՒՆ...



*Ֆրանսիական Vox Sirenis և հայկական «Փարոս» կամերային երգչախմբերի համատեղ ելույթը, խմբավար Բեռնար Լալման*

***Խաղաղության գաղափարն աշխարհի բոլոր ազգերի սեփականությունն է: Իբրև բարձրագույն բարիք` նրանք խաղաղություն են պահանջում:***

ՎԻԿՏՈՐ ՀՅՈՒԳՈ

Խաղաղության փառաբանմանն ու տարածմանը, ինչպես նաև ֆրանսիացիների ու հայերի բարեկամությանն էր նվիրված` հոկտեմբերի 12-ին, Կոմիտասի թանգարան-ինստիտուտում, Ֆրանկոֆոնիայի օրերի շրջանակներում կայացած յուրահատուկ և բացառիկ համերգը` Ֆրանսիական *Vox Sirenis* և հայկական «Փարոս» կամերային երգչախմբերի մասնակցությամբ:

10




2018-ին լրացավ երաժշտագետ, գրող-հրապարակախոս, երգչուհի (մեծո-սոպրանո), նկարչուհի, ԽՍՀՄ Կոմպոզիտորների միության անդամ, ՀԽՍՀ Մշակույթի վաստակավոր գործիչ, Ա. Սպենդիարյանի տուն-թանգարանի հիմնադիր` Մարինա Սպենդիարովայի ծննդյան 115-ամյակը:

4



## Памяти Азнавура

**С уходом каждого человека уходит целый мир. С уходом человека такого масштаба – поэта, композитора, артиста, певца, которого знаешь и чьи песни вошли в твою жизнь, уходит и часть нашей жизни. Но остается память, остаются песни, фильмы, записи концертов, которые вновь и вновь будут возвращать нам минуты общения с этой неординарной личностью, а жизнь его продлится в людях, которые будут вечно ему благодарны за то, что он был. Шквал аплодисментов сопровождал его всюду, где он выступал. Его ждали везде.**

5

## ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍ-ՑԵՐԵԿՈՒՅԹ ՈՒՍՈՒՑՉԻ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ




*Արմավիրի արվեստի պետական քոլեջի տնօրեն Նունե Սուրադյան, դասախոսներ և ցերեկույթ-ցուցահանդեսի մասնակից-ուսանողներ*

2

## Նվիրվում է ԵՊԿ հիմնադրման 95- նաև ԵՊԿ երախտավոր Շուշանիկ Ափոյանի (17.10.1923) ծննդյան 95- և Ելենա Անուշավանի Տեր-Ղևոնդյանի (23.9.1918) ծննդյան 100-ամյակներին

*(միջոցառում-համերգը տեղի ունեցավ հոկտեմբերի 17-ին, Արամ Խաչատրյանի տուն-թանգարանում)*

ԵՊԿ երախտավորներից է Շուշանիկ Հարությունի Ափոյանը, որի ծննդյան 95-ամյակն էր հոկտեմբերի17-ին: Հոկտեմբերի 1-ը նաև ԵՊԿ հիմնադրման 95-ամյակն էր, հիանալի զուգադիպություն, ոչ միայն որպես պրոֆեսորների տարդարձն էր, այլ նաև ԵՊԿ ամբիոնների հիմնադիրների` Շ. Հ. Ափոյանը` կատարողական արվեստի պատմության, տեսության և մեթոդաբանության ամբիոնի, և Ե. Ա. Տեր-Ղևոնդյանը` կոնցերտմայստերության պատրաստման ամբիոնի առաջին վարիչ (նրա 100-ամյակն էլ լրացել էր սեպտեմբերի 23-ին): Կազմակերպիչն էր` «ԵՊԿ հրատարակչությունը»` երաժշտագետ, հրատարակիչ Գոհար Շագոյանը և ներածական խոսքով ու վարմամբ: Մասնակցում էին դաշնամուրային մասնագիտական ամբիոնների առաջատար պրոֆեսորներ, հանձինս Ս. Գ. Սարաջյանի, Ա. Ս. Ներսիսյանի: Խոսքով հանդես եկան` ներկայի ամբիոնի վարիչները, ովքեր արժանապատվորեն պահպանում են իրենց սիրելի գործընկերների հիշատակը: Ի. Լ. Զոլոտովան հանգամանորեն ներկայացրեց` բացի աշխատանքային նաև` Շ. Ափոյանի հետ համատեղ գիտական գործունեությունը: ԵՊԿ հրատարակչության լույս ընծայած Շ. Հ. Ափոյանի ժառանգությունը ներկայացրեց` Գ. Կ. Շագոյանը: Այնուհետև դաշնամուրային ընտիր կատարումներով հանդես եկան` դոցենտ Կարինա Հովհաննիսյանը (Շուբերտ` Հումորեսկ C-dur), այնուհետև համերգը հետաքրքրական էր դաշնամուրային դուետների առկայությամբ` Իզաբելլա Մարությանի և Անահիտ Ներսիսյանի, հայր և որդի Սարաջևյան աշուղական թեմաներով մշակումների մեկնաբանմամբ: Համերգային մասի սկզբում նչեց նաև Գ. Վ. Սարաջյանի` Կոմիտասի «Կռունկ»ի մշակումը, 3-րդ կուրսի ուսանող Վ. Այվազյանի կատարմամբ: Կամ Մարինա Գևորգյան և Արմեն Մարտիրոսյան (Մոսկվա) դաշնամուրային զուգանվագը, նրանք հնչեցրեցին ժամանակակից ինքնատիպ ոճով (փոփ-ջազ-դասական-ժողովրդական) ստեղծագործող կոմպոզիտոր Նարինե Զարիֆյանի` «Հայկական էսքիզները»: Գ. Շագոյանը հիշեց նաև Է. Ուզունյանի հետ հրատարակած, Ե. Ա. Տեր-Ղևոնդյանի երկացանկից ռոմանսների նոտային ժողովածուն: Դա նաև համատեղ կոնցերտմայստերության պատրաստման ամբիոնին էր վերաբերում, քանի որ մասնագիտական խմբագիրը` Մ. Վ. Մելիք-Ստեփանյանն էր: Այսօրվա ամբիոնի գործը և նրանց հիշատակը վառ է պահում պրոֆեսոր-վարիչ Ս. Ս. Գյուլբուդաղյանը:

8

# ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍ-ՑԵՐԵԿՈՒՅԹ ՈՒՍՈՒՑՉԻ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ



*Մարի Վարդանյան, Տատյանա Հմայակյան, Օնիկ Միրզոյան,*



*Վալենտինա Հունանյան, նվագակցող՝ Խանում Սարգսյան*



*Արմավիրի արվեստի պետական քոլեջի պարային անսամբլ, ղեկ. Գ. Բարեղամյան, Վահան Գիլոյան, Օնիկ Միրզոյան, Նարեկ Հարությունյան*



*Արմավիրի արվեստի պետական քոլեջի դհոլահարների անսամբլ, ղեկ. Հ. Մարտիրոսյան*



*«Գեղանկարչություն» և «Դիզայն» բաժինների ուսանողների աշխատանքներից*



*Դավիթ Լաչինյան, Աբրահամ Տեր-Հարությունյան, Տիգրան Ավագյան, Ալիկ Վարդանյան*



*Ստելլա Աղայան, Տիգրանուհի Մարգարյան, Տատյանա Հմայակյան պարային անսամբլ, ղեկ.՝ Գ. Բարեղամյան*

1998 թ. սկսած աշխարհի ավելի քան 100 երկրներում հոկտեմբերի 5-ը նշվում է որպես Ուսուցչի տոն:

Վերջինս հաստատելու պատմական նախատիպը եղել է 1998 թ. հոկտեմբերի 5-ին՝ ուսուցչի կարգավիճակի մասին Փարիզում կայացած կոնֆերանսը:

Արդյունքում ՅՈՒՆԵՍԿՕ-ի և աշխատանքի միջազգային կազմակերպության կողմից ստորագրվեց «Ուսուցչի կարգավիճակի մասին» փաստաթուղթը:

Այսօր ՄԱԿ-ն առաջարկում է բոլոր ծնողներին ու քաղաքացիներին մեկ րոպե մտածել, թե ինչպես է բարեփոխել իրենց կյանքը լավ ուսուցիչը: Ուստի, այսօր ուսուցչի տոնը նշվում է Համաշխարհային մասշտաբով:

Ռալֆ էմերսոնն ասել է. *«Ուսուցիչն այն մարդն է, ով դժվար բաները հեշտ է դարձնում»:*

*«Եթե ուսուցիչը սիրում է իր աշխատանքը, նա լավ ուսուցիչ կլինի: Եթե ուսուցիչը սիրում է իր աշակերտին, նա ավելի լավ ուսուցիչ կլինի: Իսկ եթե ուսուցիչը սիրում է թե՛ իր աշխատանքը, թե՛ իր աշակերտին, նա է կատարյալ ուսուցիչը»,-* ասել է Լև Տոլստոյը:

Ուինսթոն Չերչիլն ասել է *«Ուսուցիչներն այնպիսի իշխանություն ունեն, որի մասին վարչապետները միայն կարող են երազել»:*

Ինչպես գիտենք բոլոր երկրներում՝ համայնքներում, քաղաքներում, մարզերում և գյուղերում նշվում է ուսուցչի տոնը: Արմավիրի մարզի Արմավիրի արվեստի պետական քոլեջում նույնպես նշվեց մեր անկրկնելի և աննման դասախոսների տոնը:

Ուսանողներն էլ իրենց շնորհակալությունն հայտնեցին: Իրենց գեղեցիկ կատարումներով հանդես եկավ Արմավիրի վոկալ անսամբլը, հնչեցին նաև դաշնամուրային ստեղծագործություններ առանձին կատարողների կողմից և դուետով:

Այդ ամենից բացի, իրենց գեղեցիկ կատարմամբ բեմը զարդարեցին քոլեջի գեղեցկուհի պարուհիները: Եվ վերջապես համերգն եզրափակեցին քոլեջի աննման դհոլահարները. նրանք ինչպես միշտ փայլեցին բեմի վրա և զարմացրեցին իրենց հիանալի կատարմամբ նվագելով խառը չափերով գրված ստեղծագործություն: Քոլեջի ճեմասրահում ցուցադրվեցին նաև գեղարվեստի բաժնի ուսանողների գեղեցիկ աշխատանքները:

Երջանկություն է ունենալ կատարյալ ուսուցիչ և դասախոս, հպարտություն է քայլել նրա հետ կողք կողքի, անցնել նրա հետ կյանքի ճանապարհ, քանի որ նա է պատասխանատու քո ապագայի համար. քեզ լավ և կատարյալ մասնագետ դարձնելու համար: Եվ ամենակարևորը այն է, որ ինչքան բարձրանաս և հաջողությունների հասնես, երբեք չմոռանաս քո դասախոսին և ուսուցչին, որովհետև հենց նրա շնորհիվ հասել ես նրան ինչ որ ունես հիմա:

Եվ որ, թե՛ դասախոսը, թե՛ ուսուցիչը շատ մեծ դեր և նշանակություն ունեն մեր կյանքում...

Ամփոփելով, չեմ կարող չհիշատակել հայ ամենամեծ ուսուցչի՝ Կոմիտասի խոսքերը. *«Ուսուցիչ պարոննե՛ր ու քոյրե՛ր, զգուշութեամբ ու երկիւղածութեամբ մօտեցէք դաստիարակութեան գործին. խիստ փափուկ պաշտօն մըն է ձերը. դաստիարակելու կոչված էք սերունդ մը, որ ապագայ ազգն է. սխալ ուղղութեամբ ազգ մը կը խորտակէք վերջը»:*

**ԼԻԴԱ ՄԿՐՏՉՅԱՆ**
*Արմավիրի արվեստի պետական քոլեջի Երաժշտության տեսության բաժնի 1-ին կուրսի ուսանող*

# ԻՄ ՍՐՏԻ ՄԱՅՐԱՔԱՂԱՔ

Մեր Մայրաքաղաքի 2800-ամյակի տոնակատարությունների շրջանակներում, հոկտեմբերի 26-ին, Երևանի քաղաքապետարանի, Նոր-Նորք համայնքի Արտեմ Միկոյանի անվան N 166 հիմնական դպրոցում, տեղի ունեցավ տոնական միջոցառում:

«Իմ սրտի Մայրաքաղաք»՝ անվանումով միջոցառումն իրականացնելու համար, նորաոճ աշխատանքային ծրագրով, դպրոցի տնօրինության կառավարմամբ, ստեղծվել էր հատուկ խումբ՝ դասախոսական անձնակազմի և ծնողների ներգրավմամբ:

Ստեղծագործական խումբը գերազանց կատարեց իր հանձնարարականն՝ արդյունքում ստանալով հետաքրքիր գրական-երաժշտական միջոցառում, որը զուգորդվում էր բեմականացված մասով՝ Ա. Սամվելյանի յուրահատուկ ձևավորմամբ ու տեսանյութերով համալրված:

Սցենարի հեղինակներ՝ Ն. Օվչյանի ու Ա. Այվազյանի կողմից, առանձնացված էին պատմական Էրեբունին, հին և նոր Երևանը՝ իրենց հատուկ, բոլորին հայտնի ու հարազատ կերպարներով՝ «Արգիշտի արքան իր շքախմբով», «Կարաբալան» ու «Ջուր վաճառող տղան» և անշուշտ մեր քաղաքի նախագծի հեղինակ, տաղանդավոր ճարտարապետ Ալեքսանդր Թամանյանը:

Միջոցառումն էլ ավելի գեղեցկացրեցին իրենց ելույթներով, Վ. Կարապետյանի գլխավորությամբ, դպրոցում գործող «Էրիվան» պարի անսամբլի երեխաները:

Մասնակից աշակերտները հիացրեցին հանդիսատեսին




իրենց միասնական պատրաստակամությամբ ու տաղանդավոր ելույթներով:

Այդ օրվա դպրոցի պատվավոր հյուրն էր կոմպոզիտոր Էդգար Գյանջումյանը, որի «Իմ Երևան» երգից տողերն էին դարձել միջոցառման կարգախոսը: Կոմպոզիտորը ոչ միայն սիրով ընդունեց հրավերքն ու իր մասնակցությամբ մեծ ուրախություն պարգևեց երեխաներին, այլ նույնիսկ մասնակցեց միասնական ֆինալային երգին:

Էդգար Գյանջումյանին էլ դպրոցն անակնկալ մատուցեց, նվիրելով այդ օրվա կապակցությամբ կազմակերպված գեղանկարչական ցուցահանդեսին ներկայացված, նկարներից մեկը՝ 6-ի Ա դասարանի Մելիքսեթյան Նարեկի «Էրեբունին»:

Հանդիսավոր մասից հետո, սիրված կոմպոզիտորն երկար ժամանակ հատկացրեց երեխաներին, այնուհետև իր կարծիքը կիսեց, տնօրեն Մարգարիտ Քուշկյանի հետ, իր աշխատասենյակում, գաղափարի հեղինակ և համակարգող՝ Սիլվա Համբարձումովայի գլխավորությամբ, ստեղծագործական խմբի ներկայությամբ:

Էդգար Գյանջումյանն ասաց, որ ուրախ է այս մակարդակի գեղարվեստական ոճ ու ջիղ ունեցող միջոցառում դիտել ու հիմնական դպրոցի բեմահարթակում և մեծ գնահատական տվեց երաժշտական մասի պատրաստությանը: Ծանոթանալով դպրոցի երգի ուսուցչուհի Ջեմմա Էվինյանի հետ, առանձնացրեց մի քանի մասնակիցների, նշելով, որ բոլոր երեխաներն էլ գովասանքի արժանի են: Կոմպոզիտորը խնդրեց անպայման փոխանցել երեխաներին իր գնահատականն ու հավաստիացրեց, որ մի ուրիշ օր էլ մեծ սիրով կհատկացնի նրանց հետ շփվելու և նույնիսկ երգ պատրաստելու համար:

**ՎԻԿՏՈՐՅԱ ՓՈՇՈՏՅԱՆ**
*Երաժշտական քատրոնի ռեժիսոր*

# ՀԱՅԱՍՏԱՆ-ԻՏԱԼԻԱ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ



*Գայանե Ասլանյան (դաշնամուր, մագիստրատուրա 2-րդ կուրս), Մարկո Սոմադոսի, Արէգ Նավասարդյան (ջութակ, 1-ին կուրս)*



*Նվագախումբը համերգի ժամանակ, դիրիժոր Մարկո Սոմադոսի*



*Լիդիա Ֆրիդման*

Սույն թվականի հոկտեմբերի 5-ին, Արամ Խաչատրյան տուն-թանգարանում, մեծ հաջողությամբ կայացավ հայ-իտալական՝ Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի և Ուդինեի Յակոպո Տոմադինիի անվան պետական կոնսերվատորիայի ուսանողների համատեղ համերգը, որպես բուհերի համագործակցության արդյունք: Նշենք, որ այս համերգին ուսանողները պատրաստվել էին դեռևս մոտ



*Արկադի Ավանեսով, Ջիովաննի Ալբինի, Մարկո Սոմադոսի*



*Պաուլետտա Մարոկու, Արկադի Ավանեսով, Ջիովաննի Ալբինի, Մարկո Սոմադոսի, Նարինե Ավետիսյան*



*Սևան Ղարիբյան, Լիդիա Ֆրիդման, Ֆելիչե դի Պաուլո, Գոհար Շագոյան, «ԵՊԿ հրատարակչությունում»*

2 ամիս առաջ: Համատեղ փորձերից հետո, որոնք անցան համերգին նախորդող չորս օրվա ընթացքում, արդյունքը եղավ՝ գեղեցիկ և սպասված համերգը: Այդ չորս օրերի ընթացքում ԵՊԿ-ում երկու բուհերի ուսանողների մասնակցությամբ իրականացվեցին նաև վարպետության դասեր (կոմպոզիցիայի, դասական վոկալի, լարային և փողային գործիքների) և դասախոսություններ հայ և իտալացի պրոֆեսորների կողմից: Իտալացի ուսանողների հետ Հայաստան էին ժամանել նաև դիրիժոր Մարկո Սոմադոսին, որն էլ համերգի ժամանակ ղեկավարեց հայ և իտալացի ուսանողներից կազմված կամերային նվագախումբը, և Իտալական կողմի համակարգողն էր՝ կոմպոզիտոր Ջիովաննի Ալբինին:

Համերգի մասնակիցներն էին՝ Ֆեդերիկո Բինոդին, Մարչելո Բոնը, Թոմաս Բուլգիսը, Սանդրո Կալդինին, Մալթա Կասարինը, Լեոնարդո Գասպարոտոն, Մագդալենա Մանուելա Իֆտենին, Եվա Միոլան, Մատեո Լոնդերոն, Գիորգիա Ֆոտին, Նադեժդա Պերովիչը, Լուկամարիա Տրևիսան, Ջուլիո Վիդոն, Սիմոնե Զանելոն, Դանիել Զամարիանը, Լուսինե Շահազիզյանը, Լուիզա Ղազարյանը, Ջուլիետտա Հարությունյանը, մենակատարներ՝ Գայանե Ասլանյան (դաշնամուր), Արեգ Նավասարդյան (ջութակ), Կամիլա Կարգինովա (սոպրանո), Լիդիա Ֆրիդման (սոպրանո), Արփինե Աղջոյան (սոպրանո), Հեղինե Խաչատրյան (սոպրանո), Լուսինե Ստեփանյան (սոպրանո): Ծրագրում հնչեցին Անդրեա Աֆզետտայի, Ֆրանչեսկո Չիլեայի, Գեորգ Ֆրիդրիխ Հենդելի, Կարլ Օտտո Նիկոտալի, Բեատրիչե Օրտանդոյի, Ջիակոմո Պուչչինիի, Ջիոակինո Ռոսսինիի, Անտոնիո Սալիերիի, Ջուզեպպե Վերդիի, Վիրջինիո Ջոկատելլի ստեղծագործություններից:

Համերգն անցավ հետաքրքիր և ոգևորիչ մթնոլորտում:

Նշենք նաև, որ հյուրերին հայ ժողովրդական արվեստը ներկայացնելու նպատակով, այդ օրերին, կոնսերվատորիայի ժողովրդական նվագարանների և երգեցողության ամբիոնի կողմից կազմակերպվեց նաև համերգ: Իտալացի ուսանողներն այցելեցին նաև «ԵՊԿ հրատարակչություն»: Վերջինիս տնօրեն՝ Գ. Շագոյանը նրանց ծանոթացրեց կոնսերվատորիայի պաշտոնական մամուլին՝ 20-ամյա «Երաժշտական Հայաստան» ամսագրի և 13-ամյա «Երաժիշտ» ամսաթերթի գործունեությանը:

Ի դեպ, այս նախագիծն առաջարկել և իրականացրել է Իտալիայի Ուդինեի պետական կոնսերվատորիան, որն իհարկե չէր կարող իրագործվել առանց Երևանի պետական կոնսերվատորիայի ակտիվ և կազմակերպված մասնակցության, որի շնորհիվ էլ այդ 5 օրերն անցան բարձր մակարդակով: Ինչպես նշեց ԵՊԿ Միջազգային կապերի գծով պրոռեկտոր Արկադի Ավանեսովը. *«Իտալացիները մեծ տպավորություններով գնացին Հայաստանից: Նրանք բարձր գնահատեցին մեր թե՛ դասախոսների, թե՛ ուսանողների մակարդակն ու պատրաստվածությունը»:* Նրա խոսքերով. *«Նախագծի նպատակն է փորձի փոխանակումը, շփումը հայ և իտալացի դասախոսների ու ուսանողների հետ: Այն նպաստում է մեր բուհի միջազգայնացմանը և վարկանիշի բարձրացմանը: Մենք շարունակելու ենք այդ համագործակցությունը. այն ենթադրում է համատեղ ևս մի նախագիծ, որն ընթացքի մեջ է»:* Ա. Ավանեսովը տեղեկացրեց նաև, որ Երևանի պետական կոնսերվատորիան Ուդինեի Յակոպո Տոմադինիի անվան պետական կոնսերվատորիայի ռեկտորից ստացել է շնորհակալական նամակ լավ միջոցառում ապահովելու համար:

Ամփոփելով նշենք, որ այս անչափ կարևոր և օգտակար նախագծերը պետք է լինեն շարունակական և ցանկալի է, որ ոչ միայն հյուրընկալենք այլազգի ուսանողների ու դասախոսների և նրանց հետ ունենանք համատեղ աշխատանք ու արդյունքում համատեղ համերգ, այլ նաև մեր ուսանողներն ու դասախոսները մեկնեն արտասահման և մասնակցեն նմանատիպ նախագծերի:

**ԱՐՄԻՆԵ ԱԹՈՅԱՆ**
*Երաժշտագետ*



*Պաուլետտա Մարոկու*



*Համերգի հյուրեր*



*Հեղինե Խաչատրյան, Կամիլա Կարգինովա, Պաուլետտա Մարոկու, Արփինե Աղջոյան, Լիդիա Ֆրիդման*



*Նվագախումբը փորձի ժամանակ*

Ա. Սպենդիարյանի տուն-թանգարան

# «Բազմաշնորհ հայուհին». ցուցահանդես՝ նվիրված Մարինա Սպենդիարովայի 115-ամյակին

1

Այդ առիթով թանգարանը նախապատրաստել էր կոմպոզիտորի դստեր արխիվը հանրայնացնող ցուցահանդես, որը բացվեց սեպտեմբերի 22-ին, «Եվրոպական ժառանգության օրեր 2018» միջոցառումների շրջանակում: Այն մի յուրօրինակ անդրադարձ է հայկական ու եվրոպական մշակույթների միաձուլմանը. չէ՞ որ զգայական, փխրուն, միաժամանակ՝ աննկուն և ազատատենչ էությամբ հայուհու կյանքի ամեն վայրկյանը և



Ա. Սպենդիարյանի տուն-թանգարանի հիմնադիր տնօրեն՝ Վլադիլեն Բալյան և ներկայիս տնօրեն՝ Մարինե Օթարյան

նրա թողած ժառանգությունը համամարդկային արժեքները կրելու և դրանց ծառայելու խոսուն վկայություններ են: Իսկ զարմանք, ժպիտ, թախիծ ու հիացմունք արթնացնող բացահայտումները տևել էին ամիսներ շարունակ, թանգարանի աշխատակիցների կողմից Մ. Սպենդիարովայի արխիվը վերծանելու ընթացքում: Յսկայական թվով գործնական և անձնական բնույթի նամակներ, սևագիր տետրեր, ձեռագիր և մեքենագիր էջեր՝ հատվածներ նրա հեղինակային տպագիր և անտիպ գրքերից, մանրակրկիտ ուսումնասիրություններից, զեկույցներից, հեռուստատեսային և ռադիո նախագծերի սցենարներից, մամուլում տպագրված հոդվածներից, զանազան փաստաթղթեր, անձնական իրեր, լուսանկարներ և վերջապես, գեղանկարներ. այս ամենի միայն մի հատվածը հնարավոր եղավ ընդգրկել ցուցադրության մեջ, իսկ արխիվն ինքնին շարունակական ուսումնասիրությունների հարուստ պաշար է երաժշտագետների, մշակութաբանների, նկարիչների, լրագրողների և այլ մասնագետների համար:

Ցուցահանդեսին Մ. Սպենդիարովայի կյանքի և գործունեության 3 խոշոր շրջանները (Ղրիմ, Մոսկվա, Երևան) ներկայացված են առանձին՝ «համեմված» համապատասխան լուսանկարներով ու կերպարվեստի նմուշներով, որոնց վիզուալ համադրության հեղինակը դիզայներ Լիլիթ Արշակյանն է:

Այսպես, Մ. Սպենդիարովան ծնվել է 1903 թվականի օգոստոսի 10-ին, Յալթայում: Դեռ մանկուց աչքի է ընկել թատրոնի՝ զանազան կերպարներ կերտելու, նկարչության, երաժշտության հանդեպ ընդգծված հետաքրքրությամբ և օժտվածությամբ: Իսկ երբ բացահայտվեցին նրա ձայնային տվյալները, կոմպոզիտոր հայրն սկսեց երաժշտության պարապմունքներ անցկացնել դստեր հետ: Ղրիմյան շրջանում ընդգրկվել են Սպենդիարովների երեխաների մանկական, պատանեկան, գիմնազիական տարիների լուսանկարները, ինչպես նաև Մ. Սպենդիարովայի հեղինակած բնանկարները, ինքնատիպ հումորով առանձնացող ծաղրանկարները և դիմանկարները:

1924-ին Ա. Սպենդիարյանը 2 դուստրերի՝ Մարինայի և Ելենայի հետ «Լենին» շոգենավով առաջին անգամ ժամանել է Երևան: Ուղևորության ընթացքում Մարինան «պարապ չի մնացել» և ստեղծել է նավի տարբեր ազգության ուղևորների հետաքրքրական դիմանկարներ, որոնք փաստում են նրա խորաթափանցությունը և նկարչական ուրույն ձեռագիրը:

Մոսկովյան շրջանին են առնչվում Մ. Սպենդիարովայի ուսումնառությունը Գնեսինների անվան երաժշտական ուսումնարանի երաժշտագիտական, ապա՝ վոկալ բաժիններում (1928-1930), Մոսկվայի կոնսերվատորիայի մեներգեցողության բաժնում, Մ. Իպոլիտով-Իվանովի օպերային դասարանում (1930-1934), ավելի ուշ՝ կոնսերվատորիային կից վոկալի բարձր վարպետության դպրոցում (1936-1938): Յենց Մոսկվայում Մարինան իրեն դրսևորել է որպես եռանդուն արվեստասեր, ստեղծագործական և ընկերական կապեր հաստատել տարբեր ազգերի արվեստի և այլ ոլորտների գործիչների հետ: Մոսկվայի ֆիլհարմոնիայում և ռադիոյով ելույթներ է ունեցել որպես արտահայտիչ մեծո-սոպրանոյով օժտված երգչուհի՝ կատարելով արիաներ օպերաներից, մեսսաներից, արևմտաեվրոպացի և ռուս կոմպոզիտորների ռոմանսներ և այլն: Այս շրջանից պահպանված ռոմանտիկ հիշողությունները և ցուցանմուշներն էլ կապված են նրա ամուսնու՝ Վիկտոր Յուդինի և մասնավորապես վերջինիս հեղինակած՝ Մ. Սպենդիարովայի դիմանկարների հետ:

1926-ին Մարինան Մոսկվայում շուրջ 2 շաբաթ անգլերենի դասեր է տվել Իոսիֆ Ստալինի 5-ամյա որդուն՝ Վասիլիին: Ծանոթությունը Ստալինի ընտանիքի հետ, ցավոք, ճակատագրական էր: 1945-ին Մ. Սպենդիարովան ձերբակալվել է Ստալինի դեմ մահափորձ կատարելու մեղադրանքով: Յաջորդ 11 տարիները նա անցկացրել է ԽՍՅՄ տարբեր աքսորավայրերում՝ ենթարկվելով անհավանական հալածանքների, զրկանքների և տառապանքների: Միակ փրկության օղակը կրկին արվեստն էր: Մարինան հանդես է եկել որպես երգչուհի և շրջիկ թատրոնի դերասանուհի, ղեկավարել ինքնագործ երաժիշտների անսամբլ (Կոմի ԻԽՍՅ, Սիկտիվկար, Կոտլաս, Տայշետ և այլն): Այս շրջանում հանգամանորեն աշխատել է հոր մահվանից հետո հավաքագրած նյութերի վրա, որոնց հիմքով հետագայում գրել է իր երաժշտագիտական գրքերը: Եվ հենց այս ժամանակ է թղթին հանձնել «Թխենու ողկույզ» պատմվածքների շարքը՝ իր հոգու ընդվզումը, իր պատկերավոր և անչափ արժեքավոր անդրադարձն աքսորի տարիներին:

Աքսորի շրջանից պահպանված գրառումները, հուշերը, նամակները վկայում են Մարինայի կենսահաստատուն բնավորության, բախտակից ընկերներին օգնելու, պաշտպանելու և քաջալերելու ձգտման, անգամ դաժան իրավիճակներում հումորի զգացումը չկորցնելու մասին: Իսկ ինքնագործ խմբակի սաների շնորհակալական ալբոմը՝ սիրելի ուսուցչուհու հետ լուսանկարներով և նվիրում բանաստեղծությամբ, ինչպես նաև աքսորավայրերից մեկում համերգից հետո երկրպագուի՝ երգչուհուն ուղղված բանաստեղծությունը չեն կարող անտարբեր թողնել և ոչ մեկին:

1956-ին Մ. Սպենդիարովային ներում է շնորհվել: Վիրավոր, բայց արդեն ազատ արձակված «թռչունը» վերսկսել է ճախրել ստեղծագործական երկնքում: Նա հանդես է եկել որպես լրագրող՝ «Կոմունիստ» և «Կոմսոմոլեց» թերթերում վարելով «Ճանապարհորդական նոթեր. քաղաքներ, հանդիպումներ, տպավորություններ» խորագիրը, անդրադառնալով Ավստրիայում, Շվեյցարիայում, Անգլիայում, Բուլղարիայում և Յարավսլավիայում իր ուղևորություններին: Բեղուն պտուղներ է տվել նրա երաժշտագիտական բազմամյա գործունեությունը. լույս են տեսել՝ «Սպենդիարով» կենսագրական գիրքը (հայերեն և ռուսերեն տարբերակներով, 1964 և 1966), «Երաժշտի կյանքը» մանկապատանեկան վիպակը՝ Ա. Սպենդիարյանի մասին (հայերեն և ռուսերեն, 1971) և Մ. Սպենդիարովայի ֆունդամենտալ ու արժեքավոր աշխատանքը՝ «Ա. Ա. Սպենդիարովի կյանքի և ստեղծագործության տարեգրություն» փաստավավերագրական գիրքը (ռուսերեն,1975):

Երկար տարիների հետևողական և նվիրյալ աշխատանքից հետո, Մ. Սպենդիարովայի ջանքերով, 1967-ին բացվել է Ա.Սպենդիարյանի տուն-թանգարանը. իրագործվել է նրա կյանքի ամենամեծ առաքելությունը: Յաստատվելով Երևանում՝ Մ. Սպենդիարովան շփվել է հայ ականավոր մշակութային գործիչների հետ, մտերմացել ՅԿՄ նախագահ, կոմպոզիտոր Էդվարդ Միրզոյանի և նրա կնոջ՝ Ելենա Մամիկոնի հետ: Յենց տիկին Միրզոյանը և Սպենդիարյանի տուն-թանգարանի աշխատակիցներն էլ խնամել են բազմատանջ Մարինային կյանքի մայրամուտին, երբ գլուխ էին բարձրացրել հիվանդությունները և կարիքը: Իսկ նա մինչև վերջին շունչը լի էր անսպառ, լուսավոր սիրով և ստեղծագործական ծրագրերով: Արդեն որոշակի ուրվագիծ էր ստացել Մ. Սպենդիարովայի «Ալմաստի» ճակատագիրը» գիրքը, սակայն մնացել անավարտ.1982-ի օգոստոսի 1-ին կտրվեց հեղինակի կյանքի թելը:



Կենտրոնում՝ թանգարանի հանրահռչակման բաժնի վարիչ՝ Նանա Պետրոսյանը հյուրերի հետ

Մ. Սպենդիարովայի ճակատագրի պես փոթորկալի էր նաև նրան նվիրված ցուցահանդեսի բացման օրը, և չնայած անբարենպաստ եղանակին, ներկա էին պատվավոր հյուրեր՝ ԵՊԿ պրոֆեսորներ, երաժշտագետներ, լրագրողներ, մշակութային գործիչներ և պարզապես մշակութասերներ: Մ. Սպենդիարովայի ժառանգության դերը և նրա արխիվը հանրայնացնելու կարևորությունն ընդգծեց Ա. Սպենդիարյանի տուն-թանգարանի տնօրեն Մարինե Օթարյանը: Թանգարանի ստեղծման տարիներին Մ. Սպենդիարովայի հետ համագործակցության մասին պատմեց հիմնադիր-տնօրեն, 95-ամյա Վլադիլեն Բալյանը: Իսկ Յանրային ռադիոյի գործադիր տնօրեն Մարկ Գրիգորյանը կիսվեց մանկության հիշողություններով, որոնցում միշտ վառ է Մարինայի կերպարը (Մ. Սպենդիարովան տևական ժամանակ ապրել է նրա հայրական տանը): Ելույթներից հետո ցուցադրվեց «Ա. Սպենդիարով» վավերագրական ֆիլմը՝ նկարահանված 1968-ին, կոմպոզիտորի դստեր սցենարով և ձայնով:

Բոլոր հետաքրքրվողները «Բազմաշնորհ հայուհուն» անձամբ բացահայտելու հնարավորություն կունենան մինչև տարվա վերջ:

**ՅԱՍՄԻԿ ՅԱՄԲԱՐՅԱՆ**
*երաժշտագետ,*
*Ա. Սպենդիարյանի տուն-թանգարանի գիտաշխատող*



Մ. Սպենդիարովայի կոչումները և անդամակցության տոմսերը



Մ. Սպենդիարովայի՝ Ղրիմյան շրջանի լուսանկարները և իր հեղինակած գեղանկարները



Մ. Սպենդիարովայի հեղինակած գրքերը



Մ. Սպենդիարովայի՝ աքսորավայրի նամակները և շնորհավորական բացիկները

Լուսանկարները՝ Վանա Յարությունյանի

# Памяти Азнавура

Легкий, подвижный, стремительный, способный слушать и разговаривать с собеседником одновременно. Он был первым всюду. Одним из первых откликнулся на чудовищное землетрясение в Армении. В последний раз он приезжал в Ереван в день своего рождения. Отмечал 90–летие в родном городе, в ставшем ему домом Оперном театре, где его всегда ждали. К 90–летию был поставлен первый балет *La Bohême* (постановщик и балетмейстер Рудольф Харатян). 28 ноября 2018 балет будет идти увы уже как день памяти великому артисту. Легендарный французский шансонье армянского происхождения ушел от нас 1 октября 2018 года в возрасте 94 лет в своем особняке на юге Франции. Недавно вернулся из очередной гастрольной поездки в Японию и собирался принять участие в саммите Франкофонии в Армении. К его приезду в театре готовились особенно тщательно: готовилась к показу опера Массне "Манон" на французском языке, на которую был приглашен Азнавур и президент Франции Эммануил Макрон с супругой. Увы, праздника не произошло. Все чувствовали невосполнимость потери, мы все осиротели. Закончив репетицию, все спешили к кинотеатру "Москва", где к звезде с его именем несли цветы и свечи, а вечером собирались у поющих фонтанов – подарок Шарля любимому городу. Первого октября я тоже стояла окаменевшая от горя у фонтанов и плакала, как и люди разных поколений вокруг меня. Песни Шарля "поющие" фонтаны пели вместе с ним, а люди вокруг слушали и еще до конца не могли поверить, что это случилось, ведь он обещал жить до ста лет, приехать и дать сольный концерт в этот день и мы ему верили. *"Я буду жить, пока пою"*, – говорил Шарль, так и было. Он пел, работал, писал, сочинял, записывал, давал интервью за несколько дней до ухода. *"Он пел о любви, ушедшем времени, о радости и разочаровниях жизни и нежной меланхолии,* – сказала в связи с его уходом министр культуры Франции Франсуаза Ниссен. – *Один из самых больших французский певцов только что нас оставил. Известный артист, вызывавший восхищение, любимый во всем мире"*.

За всю свою жизнь Азнавур записал около 1300 песен и более 100 альбомов, работал с Эдит Пиаф, Лайзой Минелли, Фрэнком Синатрой, Селин Дион, Пласидо Доминго, Лучано Паваротти, Патрисией Каас, Мирей Матье и др.

В 1998 году его назвали лучшим эстрадным исполнителем XX века. За заслуги перед кинематографом в 1997 году получил премию "Сезар", а в августе 2017–го – звезду на Аллее славы в Голливуде. В 1988 году основал благотворительную ассоциацию *"Aznavour pour l'Armenie"* ("Азнавур для Армении"). Он пригласил Анри Верноя и 30 французских певцов и актеров, в сотрудничестве с которыми записал песню "Тебе, Армения" и снял клип. *"Сложно поверить, что человека, который определял Эпоху, создавал историю и любовь, служил своему народу, народам, человека, который на протяжении 80 лет своей сценической деятельностью восхищал и дарил тепло миллионам, сегодня больше нет с нами"*, – сказал премьер–министр Армении Никол Пашинян, который от имени армянского народа выразил соболезнование всем поклонникам творчества Шарля Азнавура.

По поводу кончины любимого Маэстро высказались многие знаменитости и политические деятели со всех концов мира. Вот некоторые из них:

*"Шарль был моим наставником, моим другом, моей любовью. Я всегда буду скучать по нему"*, – говорится в сообщении, опубликованном в Фейсбуке американской актрисой и певицей Лайзой Минелли.



**Аида Азнавурян–Гарваренц**

*"Мое сердце разбито, я потрясен. Я люблю этого человека. Я очень давно его знаю. Мы начинали практически вместе. Шарль был единственным светилом французской музыки"*, – сказал Ален Делон.

*"Шарль Азнавур олицетворял французскую культуру и был мировой звездой. Мне повезло спеть с ним. Он покинул нас, но то, что он оставил, вечно"*, – заявил британский музыкант Стинг.

*"Вы были моложе всех нас. Ваша страсть к работе всегда была для меня примером. Я всегда повторяю Ваши слова: "Если хотите, чтобы вас полюбил зритель, вы должны любить зрителей,"*– писал известный певец Андреа Бочелли.

Владилен Бальян, композитор, народнтй артист РА: *"Я считаю своим долгом высказать свои чувства по поводу кончины Шарля Азнавура, тем более, что я его знал лично. Он мой ровесник. Первые гастроли Азнавура в Ереване (1964) совпали с моим назначением на должность директора Армфилармонии, и он стал моим первым гостем. Я его встретил в аэропорту и фактически все дни, проведенные в Армении, сопровождал его. Поехали мы и в Гюмри, где Маэстро встретился со своей бабушкой. Это была очень трогательная и эмоциональная встреча. На следующий день нас принял мэр Еревана Григор Асатрян и долго рассказывал Шарлю о том, каким видит будущий Ереван. Перед отъездом Азнавур подарил мне свой портрет, и я его храню дома на самом видном месте. Я собирался на днях позвонить ему и договориться о нашей встрече в Ереване. Не получилось. Армения потеряла великого сына. Его искусство феноменально. Это бывает в исключительных случаях, потому что его природное дарование проявилось в полной мере"*.



**Шарль Азнавур ( 1970–е гг.)**




**Обложка книги воспоминаний**

Мартын Вартазарян: *"Что бы я сейчас не сказал, прозвучит повтором. И все–таки Шарль Азнавур – великий армянин, великий музыкант, великий человек. Музыкант от Бога"*.

Фанни Ардан: *"Шарль Азнавур – это окно в Париж. Окно, за которым не Париж даже, а целая Вселенная. Упоительная и влекущая. Сена, Пляс Пигаль, Мулен руж, Монмартр и Олимпия. Рычащая Пиаф, блестящая Далида, Мирей с челкой восьмиклассницы и маленький и великий Азнавур. После его концертов мы несколько раз общались в общих компаниях. Он был блестящим рассказчиком. Именно от него я впервые услышала о прошлом армян, о Геноциде 1915 г. Он никогда не забывал о своих корнях и гордился этим. Последний раз мы встретились на вечере памяти великой Далиды. Они очень дружили, и он тяжело переживал ее трагический уход. Азнавур – человек, прославивший Францию и Армению. Сколько же в тебе было добра, таланта и обаяния"*.

*"Альбомы родившегося в семье армянских эмигрантов певца были проданы во всем мире в количестве 180 млн. экземпляров. Он сыграл более чем в 60–ти фильмах"* напишет BBC. В 1998 телеканал CNN признал Азнавура "Шансонье века".

**НАТАЛЬЯ ТАТЕВОСОВНА АСМАРЯН**
***театровед***

# Կոմիտաս միջազգային գիտաժողով-փառատոն 2018

Ազգագրագետ, գիտնական, մանկավարժ, խմբավար, հասարակական հզոր եռանդի տեր արվեստագետ Կոմիտասը, հիմնվելով հայ երաժշտության խորը ու բազմակողմանի ուսումնասիրության վրա, իր լայնածավալ գործունեությամբ հիմք դրեց հայ ազգային դասական երաժշտությանը, կանխորոշելով նրա զարգացման հետագա ուղիները: Կոմիտաս վարդապետը իր անփոխարինելի տեղն է զբաղեցնում հայ երաժշտական մշակույթի բազմադարյա պատմության մեջ:

2018 թ. սեպտեմբերի 26-ից մինչև հոկտեմբերի 8-ը տոն է հայ երաժշտասեր հասարակության համար: 2014-ից սկսած, յուրաքանչյուր տարվա՝ Կոմիտասի նոր և հին տոմարներով ծննդյան օրվա միջև ընկած ժամանակահատվածում անց է կացվում «Կոմիտաս» խորագրով գիտաժողով-փառատոնը: Նշենք նաև, որ Կոմիտասի ծննդյան 150-ամյա հոբելյանը ընդգրկվել է ՅՈՒՆԵՍԿՕ-ի՝ հռչակավոր մարդկանց և կարևոր իրադարձությունների 2018-2019 թթ. օրացույցում, ՀՀ մշակույթի նախարարության, ՀՀ-ում Ֆրանսիայի Հանրապետության դեսպանատան, Փարիզի ակադեմիայի օգնությամբ Սորբոնի համալսարանի մեծ սրահում տեղի ունեցավ «Կոմիտաս. ավանդականի և ժամանակակիցի խաչմերուկում» խորագրով համաժողովը, որին մասնակցեցին Երևանի պետական կոնսերվատորիայի գիտական գծով պրոռեկտոր, պրոֆեսոր, արվեստագիտության դոկտոր Միհեր Նավոյանը, պրոֆեսոր, արվեստագիտության դոկտորներ՝ Լիլիթ Երնջակյանը, Աննա Արևշատյանը, դոցենտ, արվեստագիտության թեկնածու՝ Լուսինե Սահակյանը:



***ՀՀ ազգային ակադեմիական երգչախումբ, խմբավար և գեղարվեստական ղեկավար՝ Հովհաննես Չեքիջյան***

Փառատոնի գեղարվեստական ղեկավար Միհեր Նավոյանի կարծիքով *«Կոմիտասի ետևից քայլում է մեր ամբողջ կոմպոզիտորական արվեստը: Կոմիտասն այն մեծ կամուրջն էր, որի միջոցով կարողացանք շփվել Եվրոպայի հետ, հետևաբար այդ ժամանակի Եվրոպան ևս պետք է ներկայացված լինի այս փառատոնի շրջանակներում»:* Վերջապես ներկայացվեց նաև ժամանակակից արվեստ, որը, չափազանց տեղին է Կոմիտասի դեպքում, քանի որ մեծ Վարդապետը իր ժամանակի առաջադեմներից էր»:

Սեպտեմբերի 26-ին փառատոնի բացումը կատարեցին ՀՀ ազգային ակադեմիական երգչախումբը՝ գեղարվեստական ղեկավար և գլխավոր դիրիժոր Հովհաննես Չեքիջյանի ղեկավարությամբ: Ծրագրում ընդգրկված էին Կոմիտասի խմբերգերից՝ «Էլ, էլ», «Գութանի երգ», «Կալի երգ», «Լուսնակը սարի տակին», «Անձրևն եկավ», «Եղնիկ», «Վարդ ա յարս», «Երևան բաղ եմ արել», «Տուն արի», «Առնեմ էրթամ իմ յարը», «Հովն անուշ», «Ջավարածեծ», ինչպես նաև արտասահմանյան հայտնի կոմպոզիտորների ստեղծագործություններ՝ Ջ. Վերդիի գերիների խմբերգը «Նաբուկո» օպերայից, Պ. Չայկովսկու «Խորալ», Յան Ֆրենկելի «Կռունկներ», հատվածներ՝ Ջ. Գերշվինի «Պորգին և Բեսը» օպերայից, Շ. Գունո յի«Վալս» և «Քայլերգ», Տ. Չուխաջյանի «Կարինե» օպերետից՝ «Օ՜հ, բարեկամներ» և «Ֆինալ»:

**ՄԱՐԻԱՄ ՎԱՐԴԱՆՅԱՆ, ԱՆԻ ՓԵԼՈՇՅԱՆ**
***երաժշտագիտության 1-ին կուրս***

# Монтсеррат Кабалье (1933–2018)



Монтсеррат Кабалье

Величайшее сопрано современности, знаменитая испанская оперная певица Монтсеррат Кабалье скончалась в возрасте 85 лет в больнице Барселоны после продолжительной болезни. Сегодня ее имя знают даже люди, далекие от оперного искусства. Она – Посол доброй воли ЮНЕСКО, лауреат всевозможных премий.

Монтсеррат Кабалье родилась в 1933 году в Барселоне в простой семье. Ее полное имя вряд ли можно произнести без тренировки: Мария де Монтсеррат Вивиан Консепсьон Кабалье–и–Фольк. Родители назвали ее так в честь священной горы святой Марии Монтсеррат. Уже в 7 лет девочка проявила уникальные музыкальные способности, исполняла Кантаты Баха. Тогда родители отдали ее учиться в музыкальное училище при Оперном театре Барселоны “Лисео”, куда она поступила в 9–летнем возрасте. Там она училась пению. Окончив училище в 1953 году, она поехала в Италию, где совершенствовала свое вокальное мастерство, поначалу исполняя эпизодические роли. Дебютировала в Барселоне в 1956 году. С 1956 по 1959 пела в Базеле и в Бремене. Впервые выступила в Ла Скала в 1960 году в небольшой роли. А 7 января 1962 года дебютировала на сцене театра “Лисео” в опере Рихарда Штрауса “Арабелла”. Международное признание к ней пришло в 1965 году, когда она заменила заболевшую американскую певицу Мэрилин Хорн в концертном исполнении оперы Доницетти “Лукреция Борджиа”. Имела сенсационный успех в Нью–Йорке (1965), с которого началась ее блестящая оперная карьера в крупнейших театрах мира. Специально для нее ставят редко исполняемые оперы Доницетти, Россини. Она владела репертуаром широкого диапазона (итальянская, испанская, немецкая, чешская, русская музыка). Среди партий – Норма, Мария Стюарт, Амелия, Виолетта, Леонора. Гастролировала в СССР с театром Ла Скала в 1974 году. Одной из вершин в творческой биографии певицы стала ее роль в опере Беллини “Норма”. Впервые она спела ее в 1970 году. Премьера прошла в театре Ла Скала и через 4 года коллектив театра приехал на гастроли в Москву, исполнил “Норму” на сцене Большого театра. Тогда впервые счастливые обладатели билетов в Большой смогли насладиться непревзойденным звучанием удивительного тембра знаменитой испанской певицы. Несомненно, “Норма” – лучшая роль Монтсеррат. В Метрополитен она блестяще выступала в роли Леоноры в “Трубадуре”, Виолетты в “Травиате”, Дездемоны в “Отелло”, “Аиды” в одноименной опере Джузеппе Верди. Она пела с величайшими дирижерами и оркестрами Леонарда Бернстайна, Герберта фон Караяна, Зубина Меты, Георга Сонти. По всему миру гастролируя и выступая в лучших оперных театрах пела с не менее известными и талантливыми партнерами. Ей несомненно повезло, ведь от партнера зависит и твой успех. Она выступала с такими мастерами оперной сцены, как Лучано Паваротти, Пласидо Доминго, Хосе Каррерас, исполняя около 30 ролей, не говоря уже о многочисленных выступлениях в камерном репертуаре – свыше 800 произведений. Она спела более, чем в 120 операх. С ее участием выпущены сотни дисков. В 1976 году Кабалье присудили премию “Грэмми” за лучшее исполнение классического вокального соло. В 1987 году Монтсеррат с группой “*Queen*” и Фредди Меркюри исполнила песню “Барселона”, которая стала гимном Олимпийских игр 1992 года в Барселоне.

Монтсеррат поздно вышла замуж, имеет дочь Монтсеррат и сына Бернабе. Дочь продолжила дело матери и стала певицей, хотя не обладает таким красивым голосом как мать, в чем ереванская публика смогла убедиться в последний приезд Монтсеррат в Армению. В Национальном оперном театре им. А.Спендиаряна негде было яблоку упасть, сидели на ступенях, что обычно строго запрещается, но желаюших послушать 80–летнюю Кабалье было достаточно, чтобы заполнить зал. Мы навсегда запомнили это выступление. В концерте принял участие солист нашего театра баритон Давид Бабаян, который поделился фотографией с Монтсеррат после концерта, в котором приняла участие и дочь певицы, а также ее ученица – отличное меццо–сопрано Августина Аммимерго. На бис певица с дочерью спели шуточный кошачий дуэт Россини, который часто включала в свои концерты Елена Образцова. Шуточный дуэт поднял и без того отличное настроение слушателей, которые, насмотря на довольно насыщенную программу в 2–х отделениях, не хотели отпускать легендарную певицу со сцены. На бис певица сделала армянской публике сюрприз, спев на армянском языке гениальную песню Комитаса “Крунк”, которую впоследствии записала на диск. За



*Мастер–класс Монтсеррат Кабалье в Национальном оперном театре (солистка Асмик Торосян)*

выступление в Ереване и Арцахе, где певица также выступила с концертом, властями Азербайджана она была внесена в “черный” список. Успела Кабалье провести и мастер–класс для наших вокалистов. Представил слушателям знаменитую гостью известный оперный певец Геворк Акопян, который преподнес ей огромный букет прекрасных роз. С чувством благодарности вспоминают этот мастер–класс Асмик Торосян, Диана Петросян и Магда Мкртчян, единственная исполнившая произведение на испанском языке на концерте “Памяти величайшего мастера бельканто Монтсеррат Кабалье”. Все участники памятного концерта, в основном солисти – К.Саакян, Н.Бадалян, М.Даинян, С.Гаспарян, А.Демурчян в черных платьях после исполнения арии подходили к огромному портрету Монтсеррат, кланялись ей и переадрессовывали ей те аплодисменты, которыми их наградила публика. Очень трогательно и волнительно.

Все, кто имел счастье побывать на ее единственном концерте в Ереване, вспоминают ее в этот день и с радостью, и с печалью. Радость и благодарность за те минуты незабываемого общения с этой удивительной женщиной, и в 80 лет сохранившей способность управлять залом. Связь со слушателем ощущалась физически в напряженной тишине, слышался каждый вздох, кашель. Зал буквально замирал и задержав дыхание ловил каждую ноту, фразу великого мастера бельканто. Дорогая, несравненная Монтсеррат. Спасибо тебе за все, что ты нам дала. Мы будем помнить тебя всегда. Армения скорбит со всем миром.

**НАТАЛЬЯ ТАТЕВОСОВНА АСМАРЯН**
*театровед*

# ՄԵԾԱՆՈՒՆ ԵՐԳՉՈՒՀՈՒ ՎԵՐՋԻՆ ՈՒՍԱՆՈՂԸ



*Էնտոնի Վեյն Հարություն, Մոնսերատ Կաբալյե, Նիկոլայ Բասկով, Մոնսերատ Կաբալյեի տանը, Բարսելոնա, 2014 թ.*



*10-ամյա Էնտոնին Մոնսերատ Կաբալյեի հետ, երգչուհու 75-ամյակին, Էնտոնի Հարությանի տանը, Բարսելոնա, 2008 թ.*



*Էնտոնի Վեյն Հարություն*

Մոնսերատ Կաբալյեի երկրորդ և վերջին ուսանողն է եղել կոնտր տենոր Էնտոնի Վեյն Հարությանը, որը ծնվել է 1998 թ. Ամերիկայի Միացյալ Նահանգներում՝ Լոս Անջելեսում: Այնտեղից 2001-ից տեղափոխվել են ընտանիքով Իսպանիա՝ Բարսելոնա, այնուհետև 2016-ից Էնտոնիի ընտանիքը հայրենադարձվել է Հայաստան: Այժմ նա սովորում է ԵՊԿ վոկալ բաժնի 1-ին կուրսում, պրոֆեսոր Հասմիկ Հացագործյանի դասարանում: Էնտոնին, որը հանրահայտ երգչուհու հետ ծանոթացել էր նրա առաջին ուսանող՝ Նիկոլայ Բասկովի միջոցով, 2008 թ.: Մ. Կաբալյեի մոտ սովորել է Իսպանիայում ապրելու տարիներից և նրա խորհրդով ընդունվել է Բարսելոնայի «Լիսեյո» կոնսերվատորիան *(Conservatory Liceu de Barcelona)*, որտեղ 1 տարի սովորելուց հետո հայրենադարձելով Հայաստան, ուսումը շարունակել է Երևանի Կոմիտասի անվ. պետական կոնսերվատորիայում: Նա մեծ ոգևորությամբ է հիշում երգչուհուն.

*«Մ. Կաբալյեն խիստ և մեծ կամքի տեր մարդ էր, բեմական ուժեղ կեցվածքով: Նրա շունչն անվերջ էր, իր շնչառական հատուկ վարժության միջոցով կարող էիր երգելու ընթացքում շատ երկար շունչ պահել: Ամեն անգամ իմ երգելուց հետո, երբ կատարում էի Գ. Ֆ. Հենդելի «Lascia ch'io pianga» («Թող լաց լինեմ») ստեղծագործությունը սոպրանոյի համար, Մեծ երգչուհին անընդհատ լացում էր և ասում. «Աստծո տված քո ձայնը ինձ համար նվեր է… ես քեզ շատ եմ սպասել»»:* Մ. Կաբալյեն որոշել էր գալ Հայաստան և Երևանի 2800-ամյակի առթիվ համերգով հանդես գալ, որտեղ նաև պետք է ներկայացներ Էնտոնիին, ինչպես նաև՝ երգեր նրա և Հասմիկ Հացագործյանի հետ, ցավոք սրտի գալուց օրեր առաջ նա կնքեց իր մահկանացուն:

*«Մոնսերատ Կաբալյեի անունը ես միշտ վառ կպահեմ իմ հիշողություններում: Լինելով նրա ավեստի երկրպագուն, կփորձեմ լինել դրա շարունակողը: Յուրաքանչյուր համերգին, որտեղ ելույթ կունենամ, կզգամ իմ մեջ երգչուհու հոգին և նրա «կենդանի» ներկայությունը»,* - ասել է Էնտոնի Հարությանը:

**ԱՐՄԻՆԵ ԱԹՈՅԱՆ**
*Երաժշտագետ,*
*«Երաժիշտ» ամսաթերթի*
*գլխավոր խմբագիր*

# Ֆինլանդիայում նշվեց Երևանի հիմնադրման 2800-ամյակը

Հոկտեմբերի 3-ին Հելսինկիում կրկին տոն էր: Առիթը՝ Երևանի 2800-ամյակն էր: Միջոցառումը հիանալի ստացվեց: Նախ՝ Ֆինլանդիա-Հայաստան միության փոխնախագահ Մարինա Դանոյանը հանդես եկավ Շառլ Ազնավուրին նվիրված խոսքով, որից հետո ներկաները լռությամբ լսեցին Ազնավուրի ***«La Bohème»*** երգը: Պահը անասելի հուզիչ էր ու խորհրդավոր:



*Մարգարիտ Ոսկանյան*

Ինչպես հայտնում է Ֆինլանդիա-Հայաստան միության վարչության անդամ Ասյա Ղազարյանը, շարունակությունը միության նախագահ Աբգար Մարգարյանինն էր, ով ջերմ ողջունեց համայնքի անդամներին և հյուրերին, ներկայացրեց միջոցառման ծրագիրը, հակիրճ՝ Երևանի պատմությունը և բոլորին լավ երեկո մաղթելուց հետո՝ խոսքը փոխանցեց ֆիննական խորհրդարանում հայկական բարեկամության խմբի ղեկավար, ֆին պատգամավոր Յուհո Էէրոլային, ով բարձր գնահատեց Ֆինլանդիայի և Հայաստանի միջև կապերը և հույս հայտնեց, որ այդ համագործությունը գնալով կզարգանա:

Պաշտոնական ուղերձներից անմիջապես հետո սկսվեց միջոցառման երաժշտական մասը: Էստոնիայից ժամանած «Շաբաթ» քառյակը՝ կոմիտասյան և ժողովրդական երգերի ջազային մշակումներով ապահովեցին գողտրիկ ու ջերմ մթնոլորտ՝ միջոցառման ողջ ընթացքում:

12

# ՀԱՄԱՏԵՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ ԵՐԵՎԱՆԻ ԹԱՏՐՈՆԻ ԵՎ ԿԻՆՈՅԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏՈՒՄ



***«Հանդես» գիտամեթոդական հոդվածների ժողովածուի գլխավոր խմբագիր՝ Լաուրա Մուրադյան***



***ԵԹԿՊ ռեկտոր՝ Դավիթ Մուրադյան, Լաուրա Մուրադյան***

Հոկտեմբերի 4-ին Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտի գրադարանում տեղի ունեցավ Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտի «Հանդես» գիտամեթոդական հոդվածների 20-րդ ժողովածուի շնորհանդեսը: Միջոցառման ընթացքում շնորհակալագիր հանձնվեց գլխավոր խմբագիր, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Լաուրա Մուրադյանին՝ «Հիմնադրման օրից մինչև այսօր «Հանդես»ի աշխատանքները հաջողությամբ ղեկավարելու համար»:

Շնորհակալագրեր հանձնվեց նաև ժողովածուների մշտական հեղինակներին, առավել մեծ քանակով հրապարակած հոդվածների հեղինակներին և այն անձանց, ովքեր արդյունավետ աշխատակցել են ժողովածուների աշխատանքներին:

Համատեղ միջոցառումը շարունակվեց ՈԱԿ կենտրոնի կողմից մեր բուհի տասնհինգ դասախոսի «ԵԹԿՊԻ-ի լավագույն դասախոս»-ի հավաստագրերի հանձնմամբ, որը տրվում էր ԵԹԿՊԻ-ի դասախոսական կազմի գործունեության վարկանիշային գնահատման ընթացակարգի համաձայն:

Լաուրա Մուրադյանն իր խոսքում նշեց. *««Հանդես» գիտա-մեթոդական ժողովածուի հրատարակությունը հասունացած պահանջ էր և 2002-ին նախաձեռնելով ժողովածուի 1-ին գրքի տպագրությունը՝ մենք ինստիտուտի ղեկավարության հետ առաջնորդվում էինք ոչ միայն բուհի՝ ընդհատված գիտական գործունեության անցյալի ավանդույթը վերականգնելու ցանկությամբ, այլև նոր գիտական ներուժի բացահայտման հրամայականով: Այսօր արդեն անհերքելի իրողություն է ժողովածուի դիմորոշված բովանդակությունը: Մեր աշխատանքներն անցել են կայացման դժվարին, սակայն արգասավոր գործընթացը: Եվ այստեղ դժվար է գերագնահատել այդ տարիների ռեկտորի՝ ԽՍՀՄ ժող. արտիստ, պրոֆեսոր Սոս Սարգսյանի ջանքերը, նրա խրախուսող, ուղղորդող դերը ոչ միայն «Հանդեսի» հրատարակության, այլև ընդհանրապես բուհի ստեղծագործական բազմաբնույթ իրացումներում: Այսօր էլ մեզ համար շարունակում են կարգախոս մնալ նրա խոսքերը «Հանդեսի» 1-ին գրքի բարի երթի մաղթանքով՝ նպատակամիտված «...մեր հավաքականության էության իմաստավորմանն ուղղված ազնիվ ջանքերի»:*

*Չեմ ցանկանում խոսքս շատ անձնականացնել, բայց պետք է երախտագիտությամբ նշեմ, որ «Հանդեսի» կանոնավոր պարբերական հրատարակումն ստանձնել և սատարել են բուհի ղեկավարները, ինչպես նաև հովանավոր հրատարակիչ Նորայր Խաչատրյանը, Վան Արյանը և ուրիշներ: Իրոք, շատ են նրանք, ում համագործակցությամբ կայացել է «Հանդեսը», սակայն վստահ եմ նաև, որ «Հանդեսի» արգասավոր ընթացքն ապահովել են մեր հեղինակները, հատկապես նրանք, ովքեր հետևողական մասնակցությամբ հոդվածներ են տպագրել ժողովածուի համարյա բոլոր գրքերում: Գրիգոր Օրդոյան, Սվետլանա Արզումանյան, Նարինե Սարգսյան, Սուրեն Հասմիկյան, Անետա Երզինկյան, և էլի անուններ, բոլորին թվարկել չենք կարող, սակայն ուրախալի էր, որ արդեն բազմափորձ մասնագետների հետ «Հանդես»ում իրենց գիտական մկրտությունն են ստացել բուհի և նրա մասնաճյուղերի ուսանողները, մագիստրոսներն ու ասպիրանտները: Նրանցից շատերն այսօր, մտնելով գիտակրթական ասպարեզ, դասավանդում են բուհում՝ դրսևորելով հետազոտական-ստեղծագործական լայն հետաքրքրություններ:*

*Հիմնականում նկատի ունենալով մասնագիտական՝ թատրոնի, կինոյի պատմության, տեսության խնդիրների արդիական քննությունը՝ ժողովածուն ընդլայնել է թեմատիկ-բովանդակային տիրույթը նաև արվեստի և հասարակական մտքի մյուս ոլորտների՝ պատմության, փիլիսոփայության, գրականագիտության և շատ այլ հարցերի ուսումնասիրություններով և մեթոդական հրապարակումներով:*




*Առաջնորդվելով ճանաչման և արժևորման սկզբունքով՝ խմբագրական կոլեգիան ձգտել է հնարավորինս ընդլայնել և գործնականում օգտաշահ դարձնել «Հանդեսի» գործառույթները գիտակրթական առումով: Այդ նպատակով արդեն ավանդական խորագրերին ավելանում են նոր բաժիններ՝ համահունչ ժամանակի պահանջներին: Այդպիսին դարձավ «Ժառանգություն» բաժինը՝ Վ. Տերոյանի, Մ. Խոստիկյանի, Վ. Տելյակովսկու, Մ. Մամարդաշվիլու և այլոց գործերի հրապարակումներով:*



***Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտի դասախոսներ, ուսանողներ և հյուրեր՝ ԵՊԿ հրատարակչությունը***



***ԵԹԿՊԻ պարարվեստի ռեժիսուրայի ամբիոնի վարիչ՝ Աննա Կարապետյան, Թատրոնի և կինոյի պատմության և տեսության ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար՝ Սիրանույշ Գալստյան, ռեկտոր՝ Դավիթ Մուրադյան, ԵՊԿ հրատարակչության հիմնադիր վարիչ՝ Գոհար Շագոյան***

*Ժողովածուի լայն ճանաչմանն ու տարածմանը մեծապես նպաստեցին նաև ժողովածուի թվայնացված պարբերական հրապարակումները:*

*«Հանդեսն» անհրաժեշտաբար անդրադարձել է բուհում պարբերաբար անցկացվող տարեկան գիտաժողովներին, միջազգային փառատոներին, ազգային և համաշխարհային հասարակական կյանքի իրադարձություններին:*

*Այսօր, առիթ ունենալով ժողովածուի 20-րդ գրքի հրատարակումը, մեր գործի յուրատեսակ հաշվեկշռում կարևորում ենք ժողովածուի ճանաչման, նրա դերի ու գործնական նշանակության բարձրածայնումը մեր ուսանողների և դասախոսների շրջանում, շարունակական ընթացք, որ մեծապես նպաստելու է բուհի գիտակրթական ծրագրերի ու նախագծերի իրագործմանը»:*

Ողջունելի է նաև այն փաստը, որ ժողովածուն ունի նաև «Երաժշտություն» խորագրով բաժին, որտեղ պարբերաբար ընդգրկվում են նաև երաժշտության մասին հոդվածներ («Հանդես»ի 20-րդ համարի մեջ ընդգրկված է Շուշանիկ Հովհաննիսյանի «Նիկոլ Գալանտերյանի ռոմանսները» հոդվածը):

Շնորհանդեսին ներկա էին «ԵՊԿ հրատարակչության» աշխատակազմը՝ հիմնադիր-վարիչ՝ Գոհար Շագոյանը, խմբագիր՝ Սոֆա Ազնաուրյանը և «Երաժիշտ» ամսաթերթի գլխավոր խմբագիր՝ Արմինե Աթոյանը: Գ. Շագոյանը ողջունեց «Հանդես»ի աշխատակազմին, նրանց 20-րդ գրքի հրատարակման համար: Նրա ելույթը իր 20-ամյա փորձի փոխանակման ընթացքով էր, որը խրախուսվեց ռեկտոր՝ Դավիթ Մուրադյանի կողմից: Գ. Շագոյանը նվիրեց բուհին «Երաժշտական Հայաստան» 20-ամյա գործունեություն ունեցող ամսագրի 54-րդ համարը, որը նվիրված էր ԵՊԿ 95-ամյակին: Նվիրեց նաև նորաստեղծ՝ նրա կողմից և ՀԿՄ նախագահ-գլխավոր խմբագիր Արամ Սաթյանի հիմնադրված, ՀԿՄ պաշտոնական մամուլը՝ «Հայ կոմպոզիտոր» ամսագրի 2-րդ համարը, որը նվիրված է Երվանդ Երզնկյանի ծննդյան 70-ամյակին:



***ԵՊԿ հրատարակչության հիմնադիր-վարիչ՝ Գոհար Շագոյանը, ԵԹԿՊ ռեկտոր՝ Դավիթ Մուրադյանին նվիրեց 20-ամյա «Երաժշտական Հայաստան»՝ նվիրված ԵՊԿ ստեղծման 95-ամյակին նվիրված և ՀԿՄ պաշտոնական մամուլը՝ նորաստեղծ «Հայ կոմպոզիտոր» ամսագրերը***



***Դավիթ Մուրադյան, ԵԹԿՊԻ դասախոսներ, աշխատակիցներ և հյուրեր***

**ԱՐՄԻՆԵ ԱԹՈՅԱՆ**
***երաժշտագետ, «Երաժիշտ» ամսաթերթի գլխավոր խմբագիր***



Շուշանիկ Հարությունի Ափոյան

## Նվիրվում է ԵՊԿ հիմնադրման 95- նաև ԵՊԿ երախտավոր Շուշանիկ Ափոյանի (17.10.1923) ծննդյան 95- և Ելենա Անուշավանի Տեր-Ղևոնդյանի (23.9.1918) ծննդյան 100-ամյակներին

***(միջոցառում-համերգը տեղի ունեցավ հոկտեմբերի 17-ին, Արամ Խաչատրյանի տուն-թանգարանում)***

1

Դաշնամուրային արվեստի երաժշտության տեսության և պատմության և նրա դասավանդման մեթոդիկայի բնագավառներում ոչ միայն Հայաստանում նաև Խորհրդային միությունում, Ռուսաստանում, Լիբանանում հեղինակավոր մասնագետ՝ Շուշանիկ Հարությունի Ափոյանը Երևանի Կոմիտասի անվ. պետական կոնսերվատորիայի պրոֆեսոր է:

Ավարտել է Երևանի Կոմիտասի անվ. պետական կոնսերվատորիայի դաշնամուրային և պատմատեսական ֆակուլտետները (1947, 1948), ՀՍՍՀ ԳԱ Արվեստի ինստիտուտի ասպիրանտուրան (1949-1952) և վերապատրաստվել Լենինգրադի կոնսերվատորիայում (1953-1955):

Երաժշտագիտական գործունեությունը սկսել է 1948 թ-ից, իսկ մանկավարժականը դեռ 1947թ-ից, իսկ 1957 թ-ից սերունդներ կրթելու առաքելությունը նա կապել է Երևանի Կոմիտասի անվ. պետական կոնսերվատորիայի հետ: Երկարամյա փորձառություն ունեցող պրոֆեսորը հիմնադրել է և տարիներ շարունակ ԵՊԿ-ի կատարողական արվեստի երաժշտության տեսության և պատմության ամբիոնի վարիչն է եղել (1980-1990թթ): Սույն ամբիոնը հաջողությամբ ուղորդել է ԵՊԿ կատարողական ֆակուլտետների ուսանողների մանկավարժական գործունեության պատրաստման ընթացքը: Պրոֆեսորը, որպես երաժշտագետ, հետազոտող մեթոդիստ բազմաթիվ գիտա և ուսումնամեթոդական աշխատանքներով, մանկավաժական ուսումնական ձեռնարկների հրատարակմամբ, արժեքավոր ներդրում է կատարել հայկական դաշնամուային արվեստի ուսումնասիրությունների գործում: Առաջինն է, որ 1957թ-ից կազմել ու մշակել է «Դաշնամուրային արվեստի պատմությունն ու տեսությունը» և «Դաշնամուրի կատարողականության մեթոդիկան և դասավանդումը» (հայերեն, ռուսերեն, առկա և հեռակա ուսուցման համակարգի) դասընթացները և դրանց ծրագրերը, որոնք դասավանդվում է կոնսերվատորիայում առ այսօր: Դասավանդել է մասնագետների վորակավորման բարձացման ֆակուլտետում, լայն աշխատանք է վարել նաև կոնսերվատորիայի ասիստենտ-ստաժորների, ասպիրանտների հետ խորհրդատվությամբ:

Մեծ է Շ.Ափոյան երաժշտագետի անգնահատելի վաստակը: Նա արվեստագիտության թեկնածու է (1962): Թեկնածուական թեզն է «Հայկական դաշնամուրային երաժշտությունը», հրատարակված որպես մենագրություն՝ «Սովետական Հայաստանի դաշնամուրային երաժշտությունը» անվանումով (Երևան, 1968): Այն, մինչև այժմ որպես դասագիրք օգտագործում են տարբեր քաղաքների՝ բացի Երևանի, նաև Մոսկվայի, Ս.Պետերբուրգի, Կիևի, Լվովի, Թբիլիսիի կոնսերվատորիաներում և կարևոր է մասնագետների համար:

Այս հարուստ և հույժ կարևոր թեմային է նվիրել Շ.Ափոյանը կյանքի 50-տարիները հայ ժողովրդի գեղարվեստական մշակույթին և ըստ էության այս բնագավառում առաջին գիտական աշխատությունների հեղինակն է:

Շ.Ափոյանը հրատարակել է «Հայկական դաշնամուրային արվեստի պատմություն 1850-1920թթ» դասագիրքը (Եր.- «ԵՊԿ հրատարակչություն» 2006թ.): Պրոֆեսորի նշանակալի աշխատություններից է «Ռոբերտ Անդրիասյանը դաշնակահար և մանկավարժ» (Եր., 1984, Լիբանան 1999, ռուսերեն և հայերեն), “Из истории фортепианной педагогики и исполнительского искусства XX века” (соавтор И.Л.Золотова), Хрестоматия, Ер.,1998) ֆունդամենտալ և ծավալուն (525 էջ) աշխատանք է, “Незабываемые имена”, очерки о пианистах-армянах” (Եր.- «ԵՊԿ հրատարակչություն», 2008թ.), որն ընդգրկում է աշխարհով մեկ սփռված հայ մասնագետ դաշնակահարների գործունեությունը, որոնք էական դեր են խաղացել համաշխարհային երաժշտական մշակույթում, սկսած 19-րդ դարի 2-րդ կեսից մինչև մեր օրերը: Այն անգնահատելի ներդրում է ոչ միայն հայկական, այլև այլ երկրների դաշնամուրային կատարողական արվեստի մշակույթում:

Ինչպես նրա գիտական աշխատություններում, այնպես էլ արժեքավոր հոդվածներում հստակ արտահայտվում է գիտնականի մտահորիզոնը, նյութի խոր իմացությունը, ընդհանրացնելու ունակությունը փաստացի նյութի հետ աշխատելու մանրակրկիտ հետևողականությունը և ամենակարևորը՝ մեծ սերը ազգային երաժշտության հանդեպ:

Շ.Ափոյանը բազմաթիվ գիտական (շուրջ 140), հրապարակախոսական (շուրջ 250) հոդվածների հեղինակ է հրատարակված միջազգային, միութենական, հանրապետական ժողովածուներում, ամսագրերում, թերթերում, ինչպես նաև հանրագիտարաններում (ՀՀ հանրագիտարանում, Большая Российская Энциклопедия, Российская Музыкальная Энциклопедия):

Բազմաթիվ զեկուցումներ են արձանագրվել միութենական, միջազգային և հանրապետական գիտական կոնֆերանսներում: Հանդես է եկել մի քանի թեկնածուական թեզերի ատենախոսությամբ՝ Լենինգրադի կոնսերվատորիայի,



*Սիրիահայ ուսանող Սևան, Սոֆա Ազնաուրյան, Եվա Կոչիկյան, Հովհաննես Մուրադյան, Շուշանիկ Ափոյան, Վալենտին Թովմասյան, Հայր Լևոն Զեքիյանը հյուր է «ԵՊԿ հրատարակչություն»ում, Գոհար Շագոյան, Աննա Գևորգյան*

Թբիլիսիում՝ Վրաստանի թատերական ինստիտուտի գիտական խորհուրդներում:

Նրա աշխատանքն ու գործունեությունը բարձր են գնահատել Լենինգրադի կոնսրեվատորիայի անվանի պրոֆեսորներ, արվեստագիտության դոկտորներ Գ.Գ.Տիգրանովը, Լ.Ա.Բարենբոյմը, Ա.Պ.Կարախալովան, Ա.Ն.Դիմիտրիևան, Մոսկվայի կոնսերվատորիայի պրոֆեսորներ, արվեստագիտության դոկտորներ Ա.Դ.Ալեքսեևը, Ա.Ա.Նիկոլաևը, Ա.Վ.Մալինկովսկայան, Թբիլիսիի Կոնսերվատորիայի պրոֆեսոր, արվեստագիտության դոկտոր Մ.Դ.Ավազաշվիլին, Մեծի տանն Կիլիկիո Հայաստանեաց Եկեղեցւոյ Քրիստոնեական դաստիարակութեան բաժանմունքի տնօրեն՝ Զարեհ Արքեպիսկոպոս Ազնաւրեանը, կոմպոզիտորներ, ԽՍՀՄ ժողովրդական արտիստներ Է.Մ.Միրզոյանը, Ա.Գ.Հարությունյանը, ԵՊԿ պրոֆեսոր, դաշնակահար, վաստակավոր արտիստ, արվեստագիտության թեկնածու Վ.Վ.Սարգսյանը, և այլոք:

2006թ-ին Փարիզում՝ ՅՈՒՆԵՍԿՈ-ի շրջանակներում նշվել է Լ.Ա.Բարեմբոյմի ծննդյան 100-ամյակը և Շ.Ափոյանի անունը շեշտվել է որպես նրա լավագույն սաներից մեկը:

1960թ-ից Շ.Ա.Ափոյանը ՀՀ Կոմպոզիտորների և երաժշտագետների միության ժամանակին նաև ԽՍՀՄ անդամ է, ծավալել է երաժշտագիտական, դասախոսական, հասարակական ակտիվ գործունեություն, մասնակցել համագումարներին, պլենումներին՝ ԽՍՀՄ տարբեր քաղաքներում: 2011 թ. Շ. Ափոյանն արժանացել է «Մովսես Խորենացի» մեդալի:

Հայ երաժշտության երախտավոր, պրոֆեսոր Շուշանիկ Հարությունի Ափոյանը իր գիտական, մանկավարժական, գիտաուսումնամեթոդական աշխատանքներով, փորձի փոխանակմամբ ու վաստակով մշտապես «ներկա է» գիտակրթական ընթացքին:

**ԳՈՀԱՐ ՇԱԳՈՅԱՆ**
***երաժշտագետ***

9

***Շ. Ափոյանի նամակագրությունից***

*Дорогая Сусанна!*

*Давно я собиралась написать тебе, чтобы первым долгом выразить признательность за презентацию мне твоей замечательной книги. Вовремя откликнуться на твою любезность помешали независящие от меня обстоятельства. Теперь же я имею возможность высказать свое впечатление, что и делаю с удовольствием. Я, конечно, очень благодарна и за то, что ты нашла нужным поместить в столь солидном исследовании очерк обо мне. Очень тронута твоим вниманием, но в вопросе оценки твоей книги для меня не столь важен (хоть и приятный) факт моего в ней "присутствия", ибо главным являются поистине редкостные ее достоинства, о которых хочу высказаться.*

*Что за чудесный труд! Это же подлинное откровение для читателя, не имеющего представления о существовании армянской фортепианной школы, история которой восходит к началу XIX века. Особенно ценно то, что ты даешь представление о различных периодах и формах развития армянского пианизма. Меня восхитили мастерски написанные творческие портреты его представителей. Какие обоятельные фигуры! И как все это интересно, познавательно!*

*Хочу также отметить, что в твоем превосходном исследовании виден не только огромнейший, я бы сказала, героический труд, но и чувствуется горячая любовь и преданность теме. Я хотела бы еще заверить тебя в том, что значение этой книги выходит за рамки одной лишь армянской музыкальной культуры. В этом меня убедили также воодушевленные отзывы знакомых московских музыкантов. Книгой этой несомненно заинтересуется широкий круг читателей. Ведь благодаря твоему славному исследованию, многие будут преобщены к интереснейшей и богатой истории армянского пианизма.*

*Я еще раз хочу выразить сердечную признательность за твой прекрасный подарок - от себя и от многих коллег. Желаю тебе здоровья и хорошего настроения.*

*Обнимаю,твоя М.Гамбарян.*



*Շուշանիկ Ափոյանը դպրոցական տարիներին*



*Շուշանիկ Ափոյանի կոնսերվատորիական տարբեր տարիների սաները*



*Շուշանիկ Ափոյան, Գոհար Շագոյան, Հովհաննես Մուրադյան «Մովսես Խորենացի» մեդալի շնորհավորանքները ամբիոնում, իր սիրելի «ԵՊԿ հրատարակչության» հետ միասին*

# Елена Анушавановна Тер-Гевондян (1918-1999)



*Елена Тер–Гевондян*

8 Елена Тер–Гевондян родилась в 1918 году в Тбилиси в семье видного армянского композитора и общественного деятеля, Народного артиста Армении Анушавана Тер–Гевондяна и пианистки–концертмейстера Тамары Сагателовой–Тер–Гевондян. Они познакомились в годы учебы в Тбилисском музыкальном училище, а в дальнейшем продолжили обучение в Петербургской консерватории (А.Тер–Гевондян окончил также юридический факультет Петербургского университета). С детства живя в атмосфере любви к музыке, Елена Тер–Гевондян закономерно избрала для себя профессиональный путь служения искусству. Дома у Тер–Гевондянов стоял рояль *"Steinway"*, которым они дорожили особенно потому, что на нем, будучи в Тбилиси, играл С.Рахманинов (к сожалению, судьба этого рояля после кончины Е.Тер–Гевондян неизвестна). С 1926 года семья переехала в Ереван, где Анушавану Тер–Гевондяну предложили должность ректора Ереванской консерватории. Это были ответственные годы становления Ереванской консерватории, и Тер–Гевондян многое сделал, находясь на этом посту. Оценив достижения армянского вуза, профессора А.Тер–Гевондяна назначили ректором Азербайджанской консерватории (1934–1938), и семья временно переехала в Баку. В Азербайджанской консерватории Е.Тер–Гевондян проучилась три года в классе специального фортепиано выпускника Петербургской консерватории, профессора Майора Рафаиловича Бреннера.

В 1942–1943 годах Е.Тер–Гевондян продолжила учебу в Ереванской консерватории в классе профессора Московской консерватории Константина Николаевича Игумнова, бывшего в эвакуации в Ереване в годы Великой Отечественной войны. А с 1943 года она совершенствовала свое музыкальное образование в Московской консерватории, в классах специального фортепиано известных профессоров Самуила Евгеньевича Фейнберга и Марии Веньяминовны Юдиной. Успешно окончив в 1946 году Московскую консерваторию и получив диплом с квалификацией "пианиста–солиста", Елена Тер–Гевондян вернулась в Ереван и приступила к работе в Армфилармонии в качестве концертмейстера. Здесь первое ее выступление состоялось в январе 1947 году в концерте, посвященном творчеству композитора Аро Степаняна (помимо Е.Тер–Гевондян, в концерте участвовала в качестве концертмейстера Элеонора Восканян).

В июне 1947 года Е.Тер–Гевондян исполнила Фортепианный концерт Ф. Листа с симфоническим оркестром Армфилармонии под руководством Михаила Малунциана. В апреле 1949 года она исполнила тот же концерт под руководством Народного артиста СССР Одиссея Димитриади.

В Армфилармонии Елена Тер–Гевондян проработала до 1953 года. Это были годы активных творческих контактов с разными исполнителями (что продолжалось и в последующие годы ее неутомимой деятельности), годы поисков своего концертмейстерского стиля, исполнения и пропаганды новых произведений армянских, русских и европейских композиторов.

Уже после первых выступлений Елены Тер–Гевондян пресса отмечала ее работу в качестве концертмейстера.

В числе запомнившихся выступлений концертмейстера Е.Тер–Гевондян с известными певцами — концерты, посвященные 150–летию Пушкина (1949, солисты — Гоар Гаспарян, Любовь Лазарева, Федор Оганян, Лигия Маджанян, Мария Джалалян), творчеству Саят–Новы (1952, солисты — Арменак Тер–Абрамян и Татевик Сазандарян), а также сольные концерты Тиграна Налбандяна, Артура Айдиняна, Татьяны Ванецян и других. В 1953 году состоялись сольные концерты с Татевик Сазандарян, Татьяной Ванецян, Земфирой Седракян, Кнарик Григорян. В Ленинакане Е.Тер–Гевондян выступила с певцами Аваком Петросяном, Евгением Окуневым, Сергеем Галстяном и прославленным таристом Согомоном Сейраняном.

С 1953 года и до конца жизни Елена Тер–Гевондян связала свою деятельность (46 лет) с Ереванской консерваторией им.Комитаса. Она вела курс концертмейстерской подготовки, одновременно продолжая интенсивную концертную деятельность. Это сольные концерты с Наром Ованесяном, Анной Сараджян, Армине Тутунджян; вечер неаполитанских песен с Эдуардом Багдасаряном; литературно–музыкальный вечер, посвященный творчеству А.Исаакяна, при участии певцов Татевик Сазандарян, Нара Ованесяна, Шогер Мкртчян, Авака Петросяна, Офелии Амбарцумян, Ованеса Бадаляна, дудукиста Левона Мадояна.

В 1955 году состоялись гастроли Татевик Сазандарян и Артура Айдиняна в Кишиневе. В 1959 году состоялся концерт Татевик Сазандарян в Баку, в Азербайджанском театре оперы и балета им.М.Ахундова (в концерте приняли участие Эдуард Багдасарян и Аршавир Карапетян). Аккомпанировала Елена Тер–Гевондян.

Напомним имена постоянных творческих партнеров Елены Тер–Гевондян (она выступала преимущественно с вокалистами): Нар Ованесян, Авак Петросян, Арменак Тер–Абрамян, Шара Тальян, Аршавир Карапетян, Эльвира Узунян, Эдуард Багдасарян, Елена Вартанян, Армине Тутунджян, Кнарик Григорян, Седа Ваникян, Седа Курбанян, а также исполнители народных песен Офелия Амбарцумян и Ованес Бадалян и многие другие. Среди инструменталистов — виолончелистка Медея Абрамян, скрипачка Зоя Петросян, канонист Хачатур Аветисян, дудукист Левон Мадоян, тарист Согомон Сейранян и другие.

Е.А.Тер–Гевондян осуществлены 170 фондовых записей на Телерадио Армении с Т.Сазандарян (около 30 произведений), Н.Ованесяном (14), А.Карапетяном (11), Э.Узунян (18), Е. Варданян (11), Л. Закарян, Б. Грековым, А.Петросяном, А.Суренян, А.Ншанян, Ш.Шахбазян, а также записи с гастролирующими в Армении зарубежными армянскими певцами Л.Амара и А.Берберяном (США), С.Казарян (Бейрут), Д.Ованисяном (Румыния), Х.Пиликяном и многими другими. Многочисленные записи были осуществлены и на Всесоюзной фирме грамзаписи "Мелодия".

Долгих 27 лет продолжалось творческое содружество Елены Тер–Гевондян и Народной артистки СССР Татевик Сазандарян. Это многочисленные сольные концерты в городах СССР, в Греции в зале "Афинский палас" (1959), участие в Декадах армянского искусства в Москве (1956), Иране (Тегеран, 1956), Чехословакии (1966), гастроли с группой мастеров искусств в Сирии и Ливане (1956г.), Бельгии (Брюссель, 1962), Канаде (1967) и США (1971).

21 ноября 1959 года состоялся их сольный концерт в Москве, в зале им.Чайковского. Они исполнили романсы Шуберта, Рекли, Грига, Глазунова, Ипполитова–Иванова, Ю.Шапорина, М.Коваля, Кабалевского, арии из опер Моцарта, Доницетти, Сен–Санса, Бизе, песни Саят–Новы, романсы А.Спендиарова, А.Степаняна, Э.Багдасаряна, А.Арутюняна, арии из опер армянских композиторов.

10



*Анушаван и Елена Тер–Гевондяны*



*Гегам Григорян, Елена Тер–Гевондян*



*Елена Тер–Гевондян и Лусине Закарян. Концерт к 100–летию Комитаса. Москва, Колонный зал Дома Советов, 03.12.1969*



*Елена Тер–Гевондян и Аршавир Карапетян*



*Ольга Хостикян, Нуне Касабян, Арташес Калашян, Георгий Касабян 04.05.1983 В доме Елены Анушавановны после концерта.*



*Нар Оганесян и Елена Тер–Гевондян*

# Елена Анушавановна Тер-Гевондян (1918-1999)



Елена Тер–Гевондян, Анушаван Тер–Гевондян, Татевик Сазандарян, Гурген Адамян после сольного концерта Нара Оганесяна. Ереван, Малый зал Армфилармонии,1959



Елена Тер–Гевондян, Эльвира Узунян с деятелями культуры



Георгий Касабян, 4.05.1983 г.

9

Долгими и плодотворными были творческие связи Е.Тер–Гевондян и со знаменитым басом Наром Ованесяном. На сцене они выступали 24 года.

Столько же лет насчитывают совместные выступления и с известным баритоном, Народным артистом Армении Аршавиром Карапетяном. В 1963 году состоялись гастроли армянских артистов во Франции. В разных городах было сыграно 19 концертов. С 1964 года началось творческое содружество Елены Тер–Гевондян с певицей Эльвирой Узунян, которое длилось почти 25 лет.

За годы концертмейстерской деятельности Еленой Тер–Гевондян было исполнено много тематических программ, посвященных творчеству как армянских, так и советских и зарубежных авторов, в частности: Шуберту, Шуману, Стравинскому, Прокофьеву, Шостаковичу, Бриттену, Свиридову, Кабалевскому, Таривердиеву, Тактакишвили и другим композиторам.

За активную плодотворную концертную деятельность в 1959 году Елене Тер–Гевондян было присвоено звание Заслуженного артиста Армении.

За все годы исполнительской деятельности Е.А.Тер–Гевондян приняла участие в более, чем 1000 концертах, из которых 126 — сольные концертные программы с певцами.

Заслуженная артистка Армении Елена Тер–Гевондян стала первой исполнительницей–концертмейстером многих вокальных произведений армянских композиторов. Среди них: “Мой Ереван” В.Котояна, его же “Саят–Нова”; цикл “Песни Араратской долины” А. Сатяна, его же “Девушка с гор”; “Песня колхозницы” Е.Сааруни, “Вардин аси” А. Тер–Гевондяна, “Под дождем” А. Хачатуряна, “Арарат” и “Тоска” Г.Читчян, “Арпа–Севан” Э.Оганесяна и другие.

В 1970 году Е.А.Тер–Гевондян возглавила новосозданную (ранее действующую в составе кафедры камерного ансамбля) кафедру концертмейстерской подготовки Ереванской консерватории и проработала на этом посту долгих 20 лет. В 1966 году она была удостоена звания доцента, в 1978 году — профессора. Класс Елены Анушавановны окончили 176 студентов и аспирантов. Ныне на кафедре концертмейстерской подготовки успешно работают ее выпускники: профессора Сенора Гюльбудагян (заведующая кафедрой), Рузанна Бек–Мармарчева, Лианна Гаспарян; доценты Сюзанна Амбарцумян, Гаяне Барсегян, Заруи Казарян, Ольга Хостикян.

Еленой Анушавановной Тер–Гевондян написаны учебно–методические работы: “О роли и задачах пианиста в работе с вокалистом”, “О педагогических принципах пианистки М.В.Юдиной”, “Исполнительский анализ фортепианных партий ряда вокальных сочинений А.Г.Тер–Гевондяна”, а также “Творческие портреты Марии Мирзоевой и Марии Камоевой” из цикла “Выдающиеся пианисты–ансамблисты”. Е. Тер–Тевондян выступала с докладами перед исполнением вокальных циклов ”Любовь поэта” Шумана и “Детская” Мусоргского. Под редакцией Е. Тер–Гевондян вышли в свет сборники: “ Избранные вокальные сочинения А. Тер–Гевондяна ” и “10 вокализов А.Тер–Гевондяна”. Елена Тер–Гевондян — автор двух романсов на стихи О.Туманяна: “Айтнутюн” — “Инчу индз морацар”и “Ду ко чампен гна, куйрик”.

Елена Анушавановна Тер–Гевондян награждена медалями “За трудовое отличие”, “Ветеран труда”, “Отличник военно–шефской работы”. Деятельность ее отмечена многочисленными почетными грамотами и благодарностями. В ознаменование творческих заслуг Елены Тер–Гевондян, в 2005 году в Ереване впервые состоялся Фестиваль концертмейстеров, посвященный ее памяти (было проведено 3 концерта). А с 2008 года периодически, раз в 2 года, проводится Республиканский конкурс молодых концертмейстеров имени Е.А.Тер–Гевондян – серьезное испытание для концертмейстеров – с разнообразной программой в 2 тура, который становится все более популярным и известным.

**САЕНИК МАГАКЯН**
***пианистка, концертмейстер, доцент ЕГК***

***Фотографии, представленные в статье, из архива Георгия Касабяна, подарены Еленой Анушавановной Тер–Гевондян.***

*(Համերգ-միջոցառման մասին շարունակությունը տես՝ ամսաթերթի հաջորդ համարում)*

# ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅՈՒՆ...



*«Փարոս» կամերային երգչախումբ, դիրիժոր Րաֆֆի Միքայելյան*



*«Փարոս» կամերային երգչախումբ, դիրիժոր Յարություն Օդաբաշյան*



*Նվարդ Յովակիմյան*



*«Vox Sirenis» կամերային երգչախումբ, գեղարվեստական ղեկավար և խմբավար Բեռնար Լալման*

1

Յամերգի սկզբում գեղեցիկ ծրագրով և հիանալի կատարմամբ հանդես եկավ Vox Sirenis երգչախումբը, գեղարվեստական ղեկավար և խմբավար Բեռնար Լալման, նվագակցող՝ Բրունո Կուսե:

Դրանից հետո, «Փարոս» կամերային երգչախմբի հրաշալի կատարմամբ հնչեց Կոմիտասի «Գութաներգ»ը, Ք. Կարա-Մուրզայի «Ալագյազ»ը, Լեոնարդո Սկիավոյի «Վենի Պատեռ»ը, որի հեղինակն, ի դեպ, ցանկացավ, որ իր այս գործը Յայաստանում առաջին անգամ կատարի «Փարոս» երգչախումբը, և Մորիս Դյուրուֆլեի «Ubi caritas»ը՝ դիրիժոր Րաֆֆի Միքայելյանի ղեկավարությամբ: Յամերգի առաջին բաժնի վերջում երկու երգչախմբերի համատեղ կատարմամբ, Ր. Միքայելյանի ղեկավարությամբ, հնչեց Կոմիտասի «Սիրտ իմ սասանի» ստեղծագործությունը: Առաջին բաժնում հատկապես աչի ընկավ Յարություն Օդաբաշյանի «Ավե Մարիա» ստեղծագործության պրեմիերան, որը «Փարոս»ը՝ հեղինակի ղեկավարությամբ, ներկայացրեց խորը զգացմունքայնությամբ և եթերային հնչողությամբ, իսկ մենակատար Նվարդ Յովակիմյանն առավել խորացրեց այդ զգացողությունները և նոր թափ հաղորդեց հնչողությանը իր գեղեցիկ, գրագետ և ազդեցիկ կատարմամբ, նվագակցում էր Արգինա Յարությունյանը: Այս ստեղծագործության (որտես հեղինակն օգտագործել է Վ. Ա. Մոցարտի N 21 դաշնամուրային կոնցերտի Andante-ն) կատարումը Յ. Օդաբաշյանը նվիրեց Շարլ Ազնավուրին (համերգի օրը լրանում էր Մեծ շանսոնիեի մահվան 7-րդ օրը):

Երկրորդ բաժնում, երկու երգչախմբերի համատեղ կատարմամբ հնչեց երկար սպասված «Cantate pout la paix»՝ խաղաղության կանտատը (Բեռնար Լալմանի մշակմամբ), դիրիժոր Բեռնար Լալման, մենակատար Նվարդ Յովհակիմյան, նվագակցող Բրունո Կուսե: Կանտատում հնչեցին գործեր յոթ լեզուներով, այդ թվում նաև հայերեն՝ Ջեյմս Գյոզալյանի «Բարեկամության երգ»ը, որը ինչպես նշել է երգչախմբի միակ հայախոս անդամը՝ Ֆիլիպ Ջամեանը երգչախմբին տվել էր ֆրանսիական «Գողթան» երգչախմբի ղեկավար Յայկ Սարգսյանը. *«Կանտատի սկզբնական տարբերակում, որն առաջին անգամ հնչել է Նազարեթում, ի նշան Պաղեստինի և Իսրայելի միջև հաշտության խթանման, հայերենով գործ չկար և ես համառեցի, որ հայերեն մաս ավելացվի: «Բարեկամության երգը» մեր ղեկավարը զետեղեց արաբերեն և եվրայերեն երգերի միջև, քանի որ այդ երեք երգերը նույն տոնայնության մեջ են»* (https://soundcloud.com/armradio/voxsirenis):

Յամերգը եզրափակվեց Էդգար Յովհաննիսյանի «Էրեբունի-Երևան» երգի՝ երկու երգչախմբերի համատեղ կատարմամբ, դիրիժոր Րաֆֆի Միքայելյան:

Տոնական և ջերմ մթնոլորտը շարունակվեց և առավել թեժացավ համերգից հետո, նույն օրը, երկու երգչախմբերի անդամների հանդիպման ժամանակ, «Ունիսոն» հասարակական կազմակերպությունում, որտեղ նրանք կիսվեցին իրենց տպավորություններով և ավելի մոտիկից ծանոթացան միմյանց հետ:

Նմանատիպ համերգ-հանդիպումները շատ հետաքրքիր և կարևոր համագործակցություններ են, տարբեր մշակույթներ կրողների միմյանց հետ շփվելու հնարավորություն:

**ԱՐՄԻՆԵ ԱԹՈՅԱՆ**
***Երաժշտագետ, «Երաժիշտ» ամսաթերթի գլխավոր խմբագիր***

# Работа с программой *"MuseScore"* (урок 6): Набор песенного текста

Текст – неотъемлемая часть вокального или хорового произведения. Для его набора нам понадобится комбинация клавиш *Ctrl+L (Lyrics)*. Такая же комбинация для вызова текста и в "Сибелиусах" всех выпусков. Нам нужна еще будет палета группировки нот для получения раздельных слоговых длительностей. Наберем музыкальный текст на однолинейном нотоносце:




Нажав *Ctrl+L*, предварительно отметив, с какой ноты должен вводится текст, начинаем набирать его. Четыре паузы вначале мы можем клавишей M объединить в одну мульти–паузу:




Теперь нам надо сделать группировку нот, согласно тексту. Для этого вызываем палету: *Shift+F9–խմբավորում (группировка)* и находим отдельную ноту (надпись No beam означает – без связывающих ребер):




Отметив кликами ноты, которые нам нужно разъединить, кликаем по символу отдельной ноты, и нужные ноты разъединяются:




К указанному темпу, щелкнув на нем кликом, можем добавить его название, допустим, *Andante*. Можем добавить аккомпанемент. Из прошлых уроков это уже ясно, как:



Наши ноты приняли такой вид. Можем даже послушать их…. Не понравилось? А ведь так сейчас многие пианисты аккомпанируют, забывая о солистах. Ну ничего, у нас это исправимо без скандалов с концертмейстером.

Клавишей *F10* вызываем *«Խառնիչ»*, что в переводе означает Микшер, и ползунками регулируем громкость и реверберацию, придавая звуку баланс и легкое эхо:



Лучше стало? Не совсем. Приступим к динамике и педализации. В главной палете снова находим палету *«Գծեր» (Lines)* и, отмечая кликами нужные ноты, начинаем расставлять педаль со звездочкой отпуска, после чего расставляем нужные нам знаки динамики, нюансировки, о чем говорилось на прошлых занятиях. Наш романс примет следующий вид. Да, чтобы при исполнении в конце было бы небольшое замедление, из палеты *«Գրվածք» (Text)* выбираем *System text*, отмечаем ноту, над которой он должен писаться, двойным кликом устанавливаем шаблон и вписываем слово *Rit. (Ritenuto)*, а затем из палеты темпа наносим тем же образом шаблон темпа и вручную настриваем его на более медленный, после, нажатием клавиши *V (visibility)* делаем его невидимым. Солист замедлит именно там, где мы поставили замедление темпа.



И в конце украсим фортепианную партию лигами, чтобы культурно гляделось:

Ну а для лучшего результата советую при выборе инструмента взять два фортепиано – от одного нотоносец со скрипичным ключом, от другого – с басовым, тогда можно будет провести независимую регулировку громкости правой и левой руки.



САРГИС ЭМИЛЬЕВИЧ ОГАНЕСЯН
***кандидат искусствоведения, преподаватель ЕГК им. Комитаса***

# Ֆինլանդիայում նշվեց Երևանի հիմնադրման 2800-ամյակը



«Շաբաթ» անսամբլ


Ֆինլանդիայի հայ համայնքը

6 Միջոցառման սրահում ներկայացված էին Երևանի անցյալն ու ներկան պատկերող լուսանկարներ: Ներկաները հնարավորություն ունեցան հյուրասիրության ընթացքում, նաև շփումների ժամանակ, դիտել ցուցահանդեսը:

Միջոցառումն ունեցավ նաև փոքրիկ գրական հատված: Ֆիննական «Քյու» թատրոնի գեղարվեստական ղեկավար Հյուդե Հյուտին միության փոխնախագահ Մարինա Դանոյանի հետ միասին ներկայացրեցին մեկ ֆիննական բանաստեղծություն և նրա հայերեն թարգմանությունը: Սա փոքրիկ հատված էր մի նախագծի, որն իրականացվում է հայ և ֆինն պոեզիայի սիրահարների մասնակցությամբ: Նախագծի շրջանակում թարգմանվելու և նոյեմբերի վերջում Հելսինկիում ներկայացվելու են հայ և ֆին գրողների մի քանի ստեղծագործություններ:

Միջոցառման ամենամտերմիկ պահը համայնքի անդամների կողմից «Երևանը մենք ենք» երգի կատարումն էր, որը մեծ ոգևորություն ու հուզմունք պարգևեց թե՛ կատարողներին, թե՛ ունկնդիրներին, իսկ վերջում արված խմբակային լուսանկարը գեղեցիկ ու ուրախ ամփոփեց միջոցառումը:

Միջոցառումը կազմակերպվել էր Ֆինլանդիա-Հայաստան միության կողմից՝ Ֆինլանդահայ գործարարների ֆինանսական աջակցությամբ: Միությունը հայտնում է իր խորհին շնորհակալությունը միջոցառման աջակիցներին՝ «Օգաղենտ», «Կոքսա», «Հայաս», «Սովավտո բուս», «Մեգլար Պրո» ընկերություններին:

Հատկանշական է, որ նույն օրը՝ հոկտեմբերի 3-ին, Ֆինլանդիայի հյուսիսային քաղաքներից մեկում՝ Օուլուում, տեղի ունեցավ մեկ այլ միջոցառում՝ «Մշակույթների փառատոն-2018», որտեղ 40 երկրների տաղավարների մեջ առանձնացավ նաև հայկական տաղավարը: Օուլուի փոքրիկ հայ համայնքը հյուրերին ներկայացրեց Հայաստանի պատմությունն ու մշակույթը: Աշխարհի տարբեր երկրներից հարյուրավոր հյուրեր ճաշակեցին հայկական ղափամա, տոլմա, լավաշ, գաթա ու ժենգյալով հաց: Նրանք շատ հետաքրքրված էին Հայաստանի մասին բազմազան տեղեկություններով և հնարավորություն ունեցան գրել իրենց անունները հայերենով: Փառատոնի վերջում Օուլուի հայ համայնքի ներկայացուցիչները նրանց սովորեցրին մի քանի հայկական պար ու ուս-ուսի տված պարեցին հայկական, միևնույն ժամանակ միջազգային պարերը:

**Խմբագրական**

***Նյութը վերցված է***
***http://hayernaysor.am/archives/295271 կայքից***

## ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հրատարակվել է Կոմիտաս/Գերմաներեն երկեր ժողովածուն: Գրքում հավաքված ստեղծագործությունները հիմնականում Կոմիտասի Բեռլինում 1896-1899 թվականներին ուսանած տարիների աշխատանքերն են և հրատարակվում են համապարփակ ձևով աշխարհում առաջին անգամ: Գրքում ներկայացված են մեներգեր դաշնամուրի նվագակցությամբ, «ա կապելլա» երգչախմբային ստեղծագործություններ, դաշնամուրային երկեր, լարային քառյակի համար փոքր ստեղծագործություններ և փոքր սիմֆոնիկ նվագախմբի համար մի կտոր, ինչպես նաև Կոմիտասի կողմից թարգմանված և մշակված Հայկական պատարագի մեղեդիներ: Գրքի վերջում կան ստեղծագործական առումով սկզբնական փուլում գտնվող կամ անավարտ (մասամբ կորած) երկեր: Ինչպես երևում է, երկերից ոչ բոլորն են լիովին մշակված, սակայն ներկայացվում են առանց որևէ փոփոխությունների, «ուղղումների» կամ ավելացումների: Թերևս միակ ավելացումը՝ դա բանաստեղծների անուններն են: Այսպիսով գրքում բոլոր նյութերը ներկայացվում են այնպես, ինչպես որ կան իր ձեռագրերում: Մեներգերի և երգչախմբային երգերի համար ընտրած բանաստեղծությունների հեղինակներն են Գյոթեն, Լենաուն, Ռոքետտեն, Շթորմը, Շթուրմը, Ուլանդը և Ամբրոզիուսը: Նրանց կենսագրական հակիրճ տվյալները և օգտագործված բանաստեղծությունների տեքստեր ներկայացված են գրքի վերջում: Բացի դրանից վերջին էջերում ընդգրկված են Կոմիտասի փաստաթղթերից, և հեղինակի՝ Տիրան Լոքմագյոզյանի կենսագրությունը: Գրքի նպատակն է? ներկայացել անծանոթ մի Կոմիտաս: Հայտնի չէ որքան է կազմում նրա գերմանական ժառանգությունը, գուցե կան կորած նյութեր, համենայնդեպս գրքում տեղ գտած կտորները գրքի հեղինակին հասած ձեռագրերից բոլոր գտանելի երկերն են, որոնք հանդես են գալիս «գերմանական երկեր» անվան ներքո:




Ձեռագրերից վերծանել և կազմել է՝ Տիրան Լոքմագյոզյանը, խմբագիր՝ Ծովինար Լոքմագյոզյան, ձևավորողներ՝ Ազատ Լոքմագյոզյան, Նաիրի Լոքմագյոզյան: Ժողովածուն տպագրվել է Երևանում, «Վիվիեմ-պրինտ» ՍՊԸ-ում, հեղինակային հրատարակությամբ:

Թողարկվել է կոմպոզիտոր Ջորջ Քիրազյանի կողմից կատարած մշակումների ձայնասկավառակը, որտեղ ընդգրկված են Հայ առաքելական եկեղեցու Պատարագից որոշ հատվածների մշակումներ՝ «Փարոս» կամերային երգչախմբի (դիրիժոր Ռաֆֆի Միքայելյան) կատարմամբ: Ընդգրկված են՝ «Խորհուրդ խորին», «Սուրբ Աստված», «Հիշեա Տեր», «Փառք քեզ, Տեր», «Տեր ողորմեա», «Մարմին տերունական», «Հրեշտակային», «Քրիստոս ի մեջ», «Ողորմություն», «Ունիմք առ քեզ Տեր ամենակալ», «Արժան և իրավ», «Սուրբ-սուրբ», «Ամեն, Հայր երկնավոր», «Համենայնի, Օրհնյալ ես», «Առաջի Քո, Տեր», «Հոգի Աստծո», «Հիշեա Տեր և ողորմեա», «Ըստ ամենայնի և Հաղագս ամենեցուն», «Ամեն, և ընդ հոգվույդ Քում», «Հայր Մեր», «Միայն սուրբ, միայն Տեր», «Ամեն Հայր սուրբ», «Տեր ողորմեա», «Հիշեա Տեր», «Օրհնյալ է աստված», «Աստված մեր և Տեր մեր», «Լցաք և բարութեանց քո, Տեր», «Գոհանամք ըզ քեն», «Ամեն», «Ամեն եղիցի», «Փառք քեզ Տեր, Աստված մեր», «Ասե Աստված», «Օրհնեսցուք ըզ Տեր», «Տեր ողորմեա» հատվածները:




2017 թ. լույս է տեսել «Հայ կոմպոզիտոր» հրապարակախոսական-քննադատական, գիտատեսական երաժշտական ամսագրի առաջին՝ անդրանիկ համարը, հիմնադիր՝ լրատվական գործունեություն իրականացնող՝ «Հայաստանի կոմպոզիտորների միություն» հասարակական կազմակերպության պաշտոնական մամուլը: Հիմնադիր-գլխավոր խմբագիրն է ՀԿՄ նախագահ Արամ Սաթյան, հիմնադիր, պատասխանատու քարտուղար և համարի թողարկման պատասխանատու երաժշտագետ՝ Գոհար Շագոյանը, ով համարվում է Հայկական երաժշտական մասնագիտական մամուլի հիմնադիրը: Խմբագիրն է՝ Սոֆա Ազնաուրյան (ռուս.), թարգմանիչներ՝ Ջեմմա Գասպարյան (անգլ.), Մարգարիտա Կիրակոսյան (հայ.), սրբագրիչ՝ Վահանդուխտ Դերձյան, էջադրումը և ձևավորումը՝ Գոհար Հովհաննիսյանի, կազմի ձևավորումը՝ Գևորգ Բաղդասարյանի: Հայաստանի գրողների միության նախագահի, ՀՀ մշակույթի վաստակավոր գործիչ, պետական մրցանակի դափնեկիր էդուարդ Միլիտոնյանը շնորհավորել է «Հայ կոմպոզիտոր» ամսագրի նորամուտը. *Շնորհավորում եմ Հայաստանի կոմպոզիտորների միության պաշտոնական մամուլի ստեղծման առթիվ՝ «Հայ կոմպոզիտոր» ամսագրի հիմնադրումը: Ցանկանում եմ, որ ամսագիրն ընդգրկի երաժշտական ամբողջ հարուստ աշխարհի անցուդարձը, երաժիշտների, հատկապես, հայ կոմպոզիտորական արվեստի ձեռքբերումներն ու հաջողությունները: Գաղտնիք չէ, որ հայ կոմպոզիտորները և նրանց ստեղծագործական միտքն առաջատարներից է ամբողջ աշխարհում և հաստատագրված Գրիգոր Նարեկացիի, Կոմիտասի, Արամ Խաչատրյանի, «Հայկական հնգյակի», Ավետ Տերտերյանի, Տիգրան Մանսուրյանի և երիտասարդների անուններով, ովքեր գալու են շարունակելու ընթացքը: Ցանկանում ենք, որ ամսագիրը երբեմն էլ անդրադառնա գրականության և երաժշտության սինթեզին, քանի որ գերագույն ժանրն օպերային արվեստն է, որ միավորում է բոլոր տեսակները գրականության, երաժշտական արվեստի և այլ ճյուղերի: Եվ հուսով ենք, որ ամսագիրն անդրադառնալու է երաժշտական ժանրերի գրական տեքստերի որակին և շարունակելու ենք համագործակցությունը գրական մտքի և երաժշտության ստեղծագործության աղերսների նոր արտահայտչամիջոցների որոնումների իրագործմամբ:*

*Ցանկանում եմ ստեղծագործական հաջողություններ գրչակից բարեկամ երաժիշտներին՝ կոմպոզիտորներին, երաժշտագետներին նաև կատարողներին:*




Ամսագիրը հրապարակվել է «Արմյուզիք» հրատարակչությունում, տպագրվել՝ «Գևորգ Հրայր» ՍՊԸ-ում:

**ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԵՐԵՎԱՆԻ ԿՈՄԻՏԱՍԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՆՍԵՐՎԱՏՈՐԻԱ ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ**

**Վկայական N 03Ա059505 տրված 7.04.2003թ.**
**ՀԻՄՆԱԴԻՐՆԵՐ՝** Կոմիտասի անվ. ԵՊԿ ՊՈԱԿ
ՍԵՐԳԵՅ ՍԱՐԱՋՅԱՆ, ԳՈՀԱՐ ՇԱԳՈՅԱՆ

**Գլխավոր խմբագիր՝** ԱՐՄԻՆԵ ԱԹՈՅԱՆ
**Թողարկման պատասխանատու՝** ԳՈՀԱՐ ՇԱԳՈՅԱՆ
**Խմբագիրներ՝** ՍՈՖԱ ԱԶՆԱՈՒՐՅԱՆ (ռուս.)
**Գեղարվեստական խմբագիր՝** ԱՐՄԻՆԵ ԱԹՈՅԱՆ

**Արտատպումը միայն «Երաժիշտ» ամսաթերթի գրավոր արտոնությամբ: Խմբագրությունը միշտ չէ, որ համամիտ է հեղինակների կարծիքներին կամ տեսակետներին:**
**Նյութերը չեն գրախոսվում և չեն վերադարձվում:**

Տպաքանակը՝ 200: Ծավալը 12 էջ: Ստորագրված է տպագրության 28.10. 2018
Տպագրվում է՝ «ԳԵՎՈՐԳ ԵՎ ՀՐԱՅՐ» ՍՊԸ տպարանում:

**Գովազդի տեղադրման համար դիմել խմբագրություն նշված հասցեով.**

**0001, ք.Երևան, Սայաթ-Նովա 1ա**
**հեռ.: (+374 10) 523 993+118**
**ֆաքս՝ (+374 10) 563 540,**
**http://www.conservatory.am,**
**E-mail: yksc@conservatory.am,**
**E-mail: YSCPublishingHouse@conservatory.am**

